Ազգ
Azg
14 ԱՊՐԻԼ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 66(4685)
ISSN: 1829-1651

# Հայաստանի եւ Ադրբեջանի ռազմական ծախսերը՝ միջազգային զեկույցում

Ստոկհոլմի խաղաղության միջազգային հետազոտությունների ինստիտուտը հրապարակել է զեկույց աշխարհի պետությունների 2010թ. ռազմական ծախսերի վերաբերյալ: Զեկույցի համաձայն՝ Հայաստանի պաշտպանական ծախսերը 2010թ. 404 մլն դոլար են կազմել, որը 45 մլն դոլարով ավելի է 2009-ի ծախսերից, իսկ ՀՆԱ-ում ռազմական ծախսերի չափաբաժինը կազմել է 4,2%: Ադրբեջանի ռազմական ծախսերը նախորդ տարի կազմել են 1,421 մլրդ դոլար, 52 մլն-ով պակաս 2009-ի ծախսերից: Վրաստանի ռազմական ծախսերը 2010թ. կազմել են 452 մլն դոլար՝ 2009-ի 604 մլն դոլարի դիմաց: Ամենառազմականացված երկիրը շարունակում է մնալ ԱՄՆ-ը: Ցուցակի երկրորդ տեղում Չինաստանն է, հաջորդում են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը:

**Ս. Խ.**

# «Պատմությունը երբեւէ չի ներել մարդկության դեմ կատարված հանցագործությունները»

## *Հայտարարել է թուրք գրող Քեմալ Յալչընը՝ ներողություն խնդրելով հայերից եւ ասորիներից*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

**Քեմալ Յալչընը** գերմանաբնակ թուրք գրող է: Նրա «Քեզ հետ է գնում սիրտս», «Սարի գյալին», «Ողջ մնացածները», «Հազարամյակի վկաներ. Անատոլիայի զավակները» վավերագրական վեպերի եւ կենսագրությունների բուն թեման Հայոց ցեղասպանությունն է, ցեղասպանությունից հրաշքով փրկվածներն ու առեւանգված իսլամացված հայերը: Յալչընի ստեղծագործությունները թարգմանվել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, հունարեն, պարսկերեն, իսկ «Քեզ հետ է գնում սիրտս» վեպը՝ նաեւ հայերեն, ինչպես Գերմանիայում, այնպես էլ Հայաստանում:



Ստեղծագործությունների թեման Յալչընին դարձրել է թուրքական պետական կառույցների հալածանքների եւ այդ կառույցների վերահսկողության տակ Գերմանիայի գլխավորությամբ եվրոպական երկրներում գործող թուրքական տարբեր միությունների սպառնալիքների թիրախ:

Այս հանգամանքը սակայն ամենեւին էլ չի խանգարում, որ Քեմալ Յալչընը հետամուտ լինի Հայոց ցեղասպանության հետ նաեւ հայ ժողովրդի դահիճների դատապարտմանը, ստեղծագործություններով թուրք ընթերցողին ներկայացնի ճշմարտությունը, հրապարակավ անվարան արտահայտվի ճշմարտության մասին, առանց թաքցնելու համակրանքը մեր ժողովրդի հանդեպ:

Ապրիլի 9-ին Բրյուսելում, ինչպես վկայում է «Հայթերթ» կայքէջի հրապարակումը, Ժողովրդավար հայերի միությունը կազմակերպել է «Թուրքիայում հայ լինել» թեմայով միջոցառումը, հրավիրելով որպես բանախոս Քեմալ Յալչընին:

Տես էջ 2

# «Ճապոնիային սպառնում է երկրաշարժերի տասնամյակ»

ԱՄՆ երկրաբանական ծառայության աշխատակից, երկրաֆիզիկոս Ռոս Սթեյնը նախազգուշացնում է, որ «Ճապոնիային սպառնում է երկրաշարժերի մի ամբողջ տասնամյակ»: Նրա խոսքերով, չպետք է կարծել, թե ցնցումներն առաջիկա շաբաթներին կամ ամիսներին կդադարեն: Հոնսյու կղզում արձանագրվող նորանոր ցնցումներն ասես հաստատում են նրա պնդումը:

«Ամենայն հավանականությամբ, այդ ցնցումների շարքը կավարտվի մոտ տասը տարուց», հայտարարել է Սթեյնը, որն իր հետազոտության վրա աշխատել է Կիոտոյի համալսարանի պրոֆեսոր Շինջի Տոդայի ղեկավարությամբ եւ ճապոնացի ուրիշ գիտնականների հետ: «Տոկիոն երկար տարիներ պետք է զգոն մնա», ասել է Սթեյնը, որի խոսքերը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Գիտնականների կարծիքով, մարտի 11-ին տեղի ունեցած 9 մագնիտուդով երկրաշարժի (որը ցունամի առաջացրեց) եւ դրան ուղեկցած ապարների տասնմեկան հետեւանքով ուժեղացել է ճնշումը Հոնսյու կղզու արեւելյան ափի երկայնքով ձգվող ճապոնական փողրակի հատվածների վրա: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ ցնցումները կրկնվելու են Տոհոկուի շրջանի մոտակայքում գտնվող հիմնական օջախի հյուսիսում եւ հարավում, նշում են գիտնականները:

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՑ ԲԱՔՈՒ**

# Մինսկի խմբի համանախագահ եռյակի ճանապարհը դեպի Բաքու

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

**Այս անգամ տարածաշրջանային հերթական այցով ժամանած ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների ճանապարհը դեպի Բաքու բավական երկար էր: Ի տարբերություն նախորդ այցի՝ այս անգամ եղանակային պայմանները համեմատաբար Ադրբեջանում շարունակվում է խեղաթյուրված շահարկվել: Բացի սրանից՝ ԼՂՀ նախագահը համանախագահների ուշադրությունն է հրավիրել Ստեփանակերտի օդանավակայանի վերաբերյալ Ադրբեջանի բարձրացրած «ոչ մարդասիրական» աղմուկի վրա:**



**բարվոք էին, եւ համանախագահները մինչեւ Բաքու մեկնելը Երեւանից ժամանեցին Ստեփանակերտ: Նախագահ Բակո Սահակյանը, ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության փոխանցմամբ, միջնորդներին ասել է. «Հակառակ միջնորդական ջանքերին՝ Ադրբեջանը շարունակում է իրականացնել քաղաքականություն, որը խոչընդոտում է ոչ միայն հակամարտության կարգավորմանը, այլեւ առհասարակ փոխվստահության մթնոլորտի ձեւավորմանը»: Որպես օրինակ ԼՂՀ նախագահը բերել է ադրբեջանական կողմից հրադադարի ռեժիմի պարբերական խախտումները եւ տարբեր իրադարձություններ խեղաթյուրված ներկայացնելը: Բակո Սահակյանը տեղեկացրել է Մինսկի խմբի համանախագահներին, որ վերջիններիս ներկայացրած դաշտային առաքելության զեկույցը**

**Ստեփանակերտից Մինսկի համանախագահ եռյակը ուղեւորություն վերցրեց արդեն դեպի Բաքու, սակայն ղարաբաղա-ադրբեջանական սահմանը կտրելով շփման գծից: Ինչպես ավելի վաղ տեղեկացրել էր «Ազգը», Մինսկի համանախագահները ծրագրել էին նաեւ այց Աղդամի շրջանի Օրտա Գյարվանդ գյուղ, որի 9-ամյա բնակիչ Ֆարիզ Բադալովի մահվան մեջ, ադրբեջանական կողմը մեղադրում է հայ դիպուկահարներին, մինչդեռ հայկական կողմից դիպուկահար կրակ պարզապես չի կարող հասնել նշված գյուղ: Նախքան Բադալովի ընտանիքին այցելությունը Մինսկի համանախագահների ներկայությամբ ընթացել է շփման գծի վերոհիշյալ մասի մոնիտորինգ, որի ընթացքում հրադադարի ռեժիմի խախտում չի արձանագրվել:**

Տես էջ 8

# Երկու փաստաթուղթ՝ Սլովենիայի հետ

**Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ապրիլի 13-ին Սլովենիայի նախագահ Դանիլո Թյուրկի հրավերով պաշտոնական այցով ժամանել է Լյուբլյանա: Նախագահի մամուլի գրասենյակից հայտնում են, որ Հայաստանի նախագահի դիմավորման պաշտոնական արարողությունից հետո տեղի է ունեցել նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Դանիլո Թյուրկի առանձնազրույցը, որին հաջորդել է երկու երկրների պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպումը: Բանակցությունների արդյունքները ամփոփվել են Հայաստանի եւ Սլովենիայի նախագահների համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ: Լրատվամիջոցների հետ հանդիպումից հետո երկու երկրների նախագահների ներկայությամբ կայացել է փաստաթղթերի ստորագրման արարողություն: Մասնավորապես, Հայաստանի եւ Սլովենիայի ԱԳՆ-ների միջեւ ստորագրվել է եվրոպական ինտեգրման վերաբերյալ համագործակցության արձանագրություն, իսկ երկու երկրների էկոնոմիկայի նախարարությունների միջեւ՝ զբոսաշրջության բնագավառում համագործակցության փոխըմբռնման հուշագիր:**

**Հ. Ա.**

# Ի պաշտպանություն Մայր աթոռի նվիրատվությունների

**«Սբ Էջմիածինն ունի մեր հավանությունն ու օգնությունը» վերնագրված բաց նամակը, որը տպագրվել է ֆրանսահայ “Nouvelles d’Arménie” պարբերականում, Նյուշատել-Ժուրայի Սբ Պետրոս եկեղեցական համայնքի նախագահ Ալեն Ուգնասը եւ փոխնախագահ Ալեքսան Թորոսյանը հանդես են եկել Հայ եկեղեցու Շվեյցարիայի թեմը կազմակերտելու ուղղությամբ Մայր աթոռի վերջին նվիրատվությունների պաշտպանությամբ: Հաստատելով, որ Շվեյցարիայի հայության մեծամասնությունը՝ շուրջ 4000 հոգի, բնակվում է Ժնեւի կանտոնի սահմաններից դուրս, Վեհափառ հայրապետի նվիրատվությունները մերժող Ժնեւի Սբ Հակոբ եկեղեցու ծխական խորհուրդը ներկայացնում է փոքրամասնություն: Նամակագիրները հավաստիացնում են, որ Նյուշատել-Ժուրայի եւ Գերմանախոս Շվեյցարիայի հայ համայնքը կողմ են թեմի հաստատմանը եւ Մայր աթոռի մյուս նվիրատվություններին:**

# Ադրբեջանի ապագա Քադդաֆին՝ Լիբիայի ժողովրդի կողքի՞ն

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ադրբեջանն, ընդհանուր առմամբ, «դրական դերակատարություն ունի տարածաշրջանում անվտանգության միջոցների ուժեղացման հարցում»: Սա հաստատապես չի կարող ներկայացվել որպես եվրոպական կառույցների կամ մեր տարածաշրջանում հետաքրքրություն ունեցող երկրների ներկայացուցիչների գնահատական այն դեպքում, երբ այսօրինակ հայտարարությունը զուտ քարոզչական նպատակներով իր կիրառությունն ու կրկնությունն է գտնում Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերի ելույթներում, ինչպիսին հանրությանը ներկայացվել է ապրիլի 12-ին, կառավարության նիստում 2011-ի առաջին քառորդի սոցիալ-տնտեսական զարգացումը:

Ռազմատենչ հայտարարությունների ու պատերազմի վերսկսման հավանականության հիմնական պատճառ հանդիսացող Ադրբեջանն, ի դեմս իր նախագահի եւ նախագահի պաշտոնական կայքէջի համաձայն, հայտարարում է, թե Ադրբեջանը «տարածաշրջանում կայունացման գործոն է»: Սա թերեւս անհանգստության առիթ պետք է տա հակամարտության կարգավորման ուղղությամբ ջանքեր գործադրողներին, բայց երբ Ալիեւը փորձում է ՄԱԿ-ում իսլամական մեծամասնությամբ անցկացված բանաձեւերը համեմատության մեջ դնել Լիբիայի առնչությամբ ՄԱԿ-ի ընդունած բանաձեւի ու դրա անհետաձգելիորեն իրագործման հետ, ապա տվյալ դեպքում կրթության պակաս չզգացած Ալիեւ կրտսերն ի հայտ է բերում դասընթացներին իր մասնակցությունը չապահոված լինելու հանգամանքը, առնվազն:

Եթե հետեւենք ՄԱԿ-ի տրամաբանությանը Լիբիայի պարագայում, որտեղ ՄԱԿ-ն արձագանքեց հենց Լիբիայի բնակչության պահանջ-խնդրանքին, ապա Ադրբեջանի՝ իսլամական համերաշխության ընդունած բանաձեւերը որեւէ կերպ չեն առնչվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ցանկություններին: Եվ այո, ճիշտ է Ալիեւ կրտսերը, երբ հայտարարում է, թե ՄԱԿ-ը կիրառում երկակի ստանդարտներ, քանի որ հենց նույն համեմատության մեջ Լիբիայի բնակչության խնդրանքին արձագանքող ՄԱԿ-ը խուլ է մնում ԼՂՀ բնակչության կոչերին արձագանքելու հարցում:

Ալիեւը հաստատապես տեղյակ է ՄԱԿ-ի կիրառած մեկ այլ ստանդարտային երկակիության մասին, սակայն երբեւէ այդ մասին չի հիշեցնում, հասկանալի պատճառներով: Խոսքը ՄԱԿ-ի հիմնական փաստաթղթերում տարածքային ամբողջականության՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հանդեպ հավասարություն չունենալու իրավիճակն է:

Տես էջ 2

# Նախագահ Սարգսյանի՝ ՄԱԿ-ի Ստամբուլյան խորհրդաժողով մեկնելու հարցը քննարկվում է

«**Ազգը**», հենվելով թուրքական աղբյուրներին, ավելի վաղ լուր էր տարածել, թե Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հրավիրվել է Թուրքիա՝ մասնակցելու այս տարվա մայիսին Ստամբուլում կայանալիք ՄԱԿ-ի միջազգային 4-րդ խորհրդաժողովին: Պատասխանելով այս լուրի վերաբերյալ հարցին Հայաստանի նախագահի խոսնակ Արմեն Արզումանյանը երեկ կայքերից մեկի թղթակցին ի պատասխան ասել է. «Եթե Դուք նկատի ունեք ՄԱԿ-ի առավել թույլ զարգացած երկրների չորրորդ համաժողովը, ապա մի քանի տասնյակ երկրների ղեկավարների շարքում ՀՀ նախագահը նույնպես հրավիրվածների կազմում է, եւ ՄԱԿ-ի համապատասխան ծառայությունների հետ մասնակցության հարցը քննարկվում է աշխատանքային կարգով»: Նա հավելել է, որ Թուրքիայի իշխանությունների հետ երկկողմ հանդիպումներ առաջիկայում չեն նախատեսվում:

**Ս. Խ.**

# ԵԽԽՎ-ում մեր պատվիրակների հարց տալու իրավունքը սահմանափակվե՞լ են

Երեկ ԵԽԽՎ-ում ելույթ է ունեցել Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Ստրասբուրգից հայաստանյան պատվիրակության անդամ **Նաիրա Զոհրաբյանը** լրատվամիջոցներին տեղեկացրել է, որ առավոտյան ինքը վեհաժողովի քարտուղարությունում ստուգել է թուրք պաշտոնյային հարց ուղղելու իր նախօրոք արված հերթագրումը եւ համոզվել, որ 42 պատգամավոր, այդ թվում նաեւ հայաստանյան պատվիրակության մեկ այլ ներկայացուցիչ ` Զարուհի Փոստանջյանը, եւս հերթագրված են եղել : Զոհրաբյանի եւ Փոստանջյանի ելույթները պետք է հաջորդեին միմյանց` համապատասխանաբար երրորդ եւ չորրորդ ելույթները պետք է լինեին: Սակայն Էրդողանի ելույթը սկսելուց հետո քարտուղարության` ուշացումով բաժանած ցուցակում Զոհրաբյանի անունը գրանցված է եղել 21-րդ, իսկ Փոստանջյանինը` 26-րդ տեղում: Ն. Զոհրաբյանն այստեղ դիտավորություն է տեսնում, իսկ Հայաստանի պատվիրակությունը երեկ պատրաստվում էր պաշտոնական պարզաբանում պահանջել ԵԽԽՎ քարտուղարությունից` կատարվածի վերաբերյալ:

Ն. Զոհրաբյանին հաջողվել է Էրդողանի ելույթից հետո ճեղքել թիկնապահների եւ պաշտոնյաների շղթան, մոտենալ Էրդողանին ու տեղեկացնել, թե ինքն ուզում էր նրան հարց ուղղել Թուրքիայի քրեական օրենսգրքի խայտառակ 301 հոդվածի վերաբերյալ, որով թուրքական դատարանը մեղավոր է ճանաչել Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկին այն հայտարարության համար միայն, որ թուրքերը 1.5 միլիոն հայ եւ 300 հազար քուրդ են սպանել: Մեծ դժվարությամբ, քանզի վարչապետի թիկնապահները «կոպիտ, անտաշ» հրել են հայ պատվիրակին` Զոհրաբյանը Էրդողանին է փոխանցել այն ալբոմը, որից նախօրեին փոխանցել էր նաեւ վեհաժողովում ելույթ ունեցած Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուին` ալբոմում պատկերված են Հայոց ցեղասպանությունից փրկված հայ երեխաները: Էրդողանը գրեթե նույն պատասխանն է տվել, ինչ նախորդ օրը Դավութօղլուն` համանման «նվեր» ստանալով. եթե պետք է, ինքն այդ նկարները կնայի, բայց եթե փաստերով սկսեն խոսել, ապա թուրքական կողմը եւս կարող է հայկական կողմին այդպիսի լուսանկարներ ներկայացնել իբր:

Ավելացնենք, որ դրանից մեկ օր առաջ Թուրքիայի վարչապետը, ԵԽԽՎ-ում պատասխանելով հայ պատվիրակ Զարուհի Փոստանջյանի` Հայոց ցեղասպանության եւ Արեւմտյան Հայաստանի հողերը զավթելու հետ կապված հարցին, պատասխանել էր. «Ես չգիտեմ ինչ պատասխանել, քանի որ սա միակողմանի, թղթից ընթերցված հայտարարություն է, որը կրկնում է բազմիցս հնչեցված մեղադրանքները: Կարծում եմ, որ ավելի լավ կլիներ, եթե դուք միջազգային իրավունքի նորմերին ծանոթանայիք` հասկանալու համար, թե ինչով է զբաղված եւ ինչպես է գործում այս կառույցը, ինչպես նաեւ դա ձեզ թույլ կտար հասկանալ, թե ինչով են մեղադրանքները տարբերվում փաստերից... Հայ եւ թուրք ժողովուրդների համար ավելի լավ կլինի, եթե ստեղծվի պատմաբանների համատեղ հանձնաժողով: Մենք առաջարկել ենք սա դեռ 2005 թվականին: 2005-ից ի վեր մենք դրական պատասխան ենք սպասում, որպեսզի սկսենք համատեղ կերպով` երրորդ կողմի մասնակցությամբ, քննել պատմական իրադարձությունները` հիմնվելով արխիվային փաստերի, այլ ոչ թե միակողմանի հիշողությունների վրա... Մենք ձեզ խնդրում ենք` եկեք համատեղ ուժերով քննենք պատմությունը: Հույս ունեմ, որ երկու կողմից էլ նոր սերնդի ներկայացուցիչներն ի վերջո կկարողանան միասնաբար կիսել անցյալի ցավերը` այդ իրադարձությունները քաղաքական նպատակներին ծառայեցնելու փոխարեն»:

Այս աղվեսային պատասխանները, իհարկե, մեզ համար անակնկալ չեն, սակայն մի անգամ եւս արտացոլում են մեր անկրկնելի հարեւանին տարբեր ատյաններում արժանի պատասխան եւ համակարգված հակահարված հնչեցնելու մշտական հրամայականը: Այդպիսի պատասխաններ հայկական կողմից ակնկալենք նաեւ ամենաբարձր մակարդակով:

**Մ. Խ.**

# «Պատմությունը երբեւէ չի ներել մարդկության դեմ կատարված հանցագործությունները»

*1-ին էջից*

Ըստ կայքէջի, թուրք բանախոսն անդրադարձել է այն իրադարձություններին, որոնք, թեեւ ակներեւ են, բայց չեն հրապարակվում: 1982-ի հունվարից ի վեր Գերմանիայում բնակվող թուրք գրողն ասել է, որ այս երկրում քաղաքական ապաստան է գտել եւ այստեղ է ճանաչել հայերին: Նրա կյանքում շրջադարձային է եղել 1994 թվականը, երբ նա իր ծնողների հորդորներով մեկնել է Հունաստան` հանձնելու իրենց տերերին օժիտի այն երկու տոպրակները, որոնք 76 տարի առաջ նախքան Թուրքիայից փախուստի դիմելը, Յալչընի մեծ հորն էին հանձնել հայ հարեւանները:

Յալչընը Հունաստանում ամբողջական պատկերացում է կազմել Հայոց ցեղասպանության մասին, իսկ դա նպաստել է, որ նա սկսի ուսումնասիրել ներկայումս Թուրքիայում բնակվող ծպտյալ հայերին:

«Մերոնք» կոչվող ծպտյալ հայերի հետ թուրք գրողը ծանոթանում է 1998-ին Ամասիայի եւ Թոքաթի շրջաններում, իսկ 2004-ին նրա ընկերներից մեկն ասում է. «Կգնաս Ադիյաման, որտեղ կհարցնես քուրդ հաջի Իբրահիմին: Նա գնում է եւ գտնում նրանց, ապա իր տպավորությունները շարադրելիս պատմում է, որ «մերոնք» կոչվող ծպտյալ հայերը ցերեկը բոլոր մուսուլմանների պես նամազ են անում, ծոմ պահում, իսկ երեկոյան իրենց տան գաղտնի մի անկյունում մեղքերի քավության համար աղոթում են Հիսուս Քրիստոսի պատկերի առջեւ:

Միջոցառմանը Քեմալ Յալչընը նշել է, որ Ադիյամանում կան ավելի քան 5 հազար «մահմեդականացված» հայեր, որոնք միմյանց «մերոնք» են անվանում եւ հատուկ օրերին զուտ համայնքի անդամների մասնակցությամբ կազմակերպում են առանձնահատուկ հավաքներ:

Միաժամանակ նա կարծիք է հայտնել, որ այսօր Թուրքիայում քրիստոնյաների թիվը կլիներ 15 մլն, եթե չիրագործվեին ցեղասպանությունները: Վերջում Քեմալ Յալչընն ավելացրել է. «Պատմությունը երբեւէ չի ներել մարդկության դեմ կատարված հանցագործությունները: Ձեր վիշտը թող հիմք հանդիսանա մնայուն խաղաղության եւ արդարության համար: Ես` որպես թուրք գրող, հայերից եւ ասորիներից ներողություն եմ խնդրում»:

# Ադրբեջանի ապագա Քադդաֆին` Լիբիայի ժողովրդի կողքի՞ն

*1-ին էջից*

Դրա փոխարեն Ալիեւ կրտսերը սեփական մեկնաբանություններով է ադրբեջանական հանրությանն ու աշխարհին մատուցում հելսինկյան սկզբունքները, ընդ որում, դրանցից մեկի անընդմեջ խախտմամբ: Այն դեպքում, երբ հելսինկյան սկզբունքներից մեկը վերաբերում է ուժի եւ դրա սպառնալիքի չկիրառմանը, Ալիեւը կրկին սպառնում է «ադրբեջանական ժողովրդի համբերության վերջանալով»: «Հիմա կամ երբեւէ ԼՂ-ին անկախություն տրամադրելը անհնար է», հայտարարել է Ալիեւը, մոռանալով, որ ԼՂՀ-ին անկախություն տրամադրելու հարցում ինքն ուշացել է, հարցը մնացել է այդ անկախության փաստն ընդունելուն: Ալիեւը նաեւ հայտարարել է, թե այդ հարցը չի հանդիսանում ու չի էլ լինի բանակցությունների թեմա:

Ալիեւի հաջորդ դիտարկումն էլ է կաղում իր ճշմարտացիության ու իրականության հետ աղերսներ ունենալու հարցում: Ադրբեջանն, ի դեմս նախագահի, Հայաստանին մեղադրում է բանակցությունները ձգձգելու մեջ այն դեպքում, երբ այս կամ այն բանակցային իրավիճակներում վեր կենալու ու գործը կիսատ թողած փախչելու վարքագիծը վերջին շրջանում Ալիեւ կրտսերի հիմնական կեցվածքն է: Իսկ ինչ վերաբերում է ալիեւյան դատողություններին, թե ստատուս քվոն պետք է փոխվի միայն Ադրբեջանի կազմ վերադառնալու ուղղությամբ, ապա դրանք զուտ ցանկություններ են, քանի որ անկախության ուղին կանգնած ԼՂՀ-ի համար վերադարձ չի կարող լինել:

Հատկանշական է, որ Ալիեւն այսպիսի հայտարարություններ է անում ու կրկնում այն ժամանակ, երբ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահները հերթական տարածաշրջանային այցով եղել են արդեն Երեւանում, հանդիպել են նաեւ ԼՂՀ նախագահի հետ ու քննարկում են օրակարգային հարցերը Ադրբեջանում:

**ՀԱՄԱՌՈՏ**

## ՕԵԿ-ի հարցապնդումը լսեցին ու հակադարձեցին

ՕԵԿ-ը հարցապնդում էր արել կառավարությանը գազամատակարարման ծառայությունների սպասարկման վճարների նպատակահարմարության վերաբերյալ` հիմնավորելով, որ սպառողները, գազի համար վճարելով` մեքենայորեն վճարում են նաեւ տեխնիկական անվտանգության եւ մատակարարման ծառայությունների դիմաց: Երեկ սա քննարկվեց Ազգային ժողովում, որին ի պատասխան էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար **Արմեն Մովսիսյանը** հայտարարեց, թե պետք է վճարել, որ գազաֆիկացմանը զուգահեռ բարձրացվի տեխնիկական սպասարկման, սպառման անվտանգության մակարդակը:

## Գերարագ ինտերնետի ծավալները կրկնապատկվել են

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ» և «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ+» փաթեթների բաժանորդների համար յուրաքանչյուր ամիս հատկացվող գերարագ ինտերնետի ծավալը կրկնապատկվել է:

Մասնավորապես, «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ» փաթեթի շրջանակներում նախկին 5ԳԲ-ի փոխարեն, որում հաշվարկվում էր ներբեռնվող եւ վերբեռնվող տվյալների ծավալը, այժմ տրամադրվում է առանձին 5ԳԲ գերարագ ինտերնետ ներբեռնման եւ 5ԳԲ գերարագ ինտերնետ` վերբեռնման համար: «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ+» փաթեթի բաժանորդների համար էլ նույն կերպ նախկին 10ԳԲ-ի փոխարեն տրամադրվում են առանձին 10ԳԲ գերարագ ինտերնետ ներբեռնման եւ 10ԳԲ գերարագ ինտերնետ` վերբեռնման համար:

**Ա. Մ.**

**ՀԱԿԻՐՃ**

# Հաջորդ ամիս տարածաշրջան կժամանի ԵԱՀԿ գործող նախագահող Լիտվայի նախագահը

**«Երկարատեւ հակամարտությունները ԵԱՀԿ-ի համար կարեւոր են, դրանց լուծմանն ուղղված ջանքերը առանցքային են կազմակերպության անդամ 56 երկրների համար»: Այդ մասին, ԵԱՀԿ լրատվական ծառայության հաղորդմամբ, երեկ ԵԱՀԿ-ի մշտական խորհրդում ունեցած ելույթում հայտարարել է Լիտվայի նախագահ Դալիա Գրիբաուսկայտեն: 2011-ին Լիտվան ԵԱՀԿ-ի նախագահող երկիր է: Նա նաեւ ասել է, որ հաջորդ ամիս կայցելի Հարավային Կովկաս, իր այցելությունը կօգտագործի փոխվստահության ամրապնդման համար եւ կոչ կանի կողմերին ներդրում ունենալ այդ գործում: «Հարավային Կովկասում բոլոր կողմերը պետք է առաջ շարժվեն փոխվստահության սկզբունքով, փոքր քայլերը մեծ ազդեցություն կարող են ունենալ հիմնախնդիրների լուծման հարցում», նշել է Գրիբաուսկայտեն:**

**Հ. Ա.**

# Ճանապարհաշինական ծրագրերին հնարավոր է վրացական ընկերությունների մասնակցությունը

**Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, նախարար Մանուկ Վարդանյանն ընդունել է Հայաստանում Վրաստանի նորանշանակ դեսպան Թենգիզ Շարմանաշվիլիին: Հանդիպման ընթացքում քննարկվել են ճանապարհաշինարարության ոլորտում տարածաշրջանային նշանակություն ունեցող ծրագրերը, դրանցում վրացական ընկերությունների մասնակցության հնարավորությունները: Մանուկ Վարդանյանը տեղեկացրել է նաեւ, որ Վրաստանի ուղղությամբ ճանապարհների վերականգնման համար ծրագիր է նախապատրաստվում:**

**Ա. Մ.**

**ԱՄՆ**

# ՀՕՖ-ը Նյու Յորքում պատվելու է Ազնավուրին



**Մայիսի 20-ին Նյու Յորքի «Կիպրիանի Ուոլ Սթրիթ» շքեղ հանդիսասրահում Հայ օգնության ֆոնդը նշելու է Հայաստանի անկախության 20-ամյակը, միաժամանակ պատվելով աշխարհահռչակ երգիչ, դերասան, բարերար եւ Շվեյցարիայում Հայաստանի դեսպան Շառլ Ազնավուրին: «Արմինյըն միրոր-սփեքթեյթրի» ապրիլի 2-ի համարում լրագրող Ֆլորենս Ավագյանի փոխանցմամբ` երեկոն վարելու է ամերիկահայ դերասան Էրիկ Բողոսյանը, իսկ Ազնավուրին ներկայացնելու է Լայզա Մինելլին: Երկուսն էլ, ինչպես նաեւ Էլթոն Ջոնը, Սելին Դիոնը, Ատոմ Էգոյանը եւ ՄԱԿ-ում եւ Մ. Նահանգներում Հայաստանի եւ Ֆրանսիայի դեսպանները, ընդգրկված են Ազնավուրին մեծարելու պատվո հանձնախմբում:**

**Երեկոյի հասույթը հատկացվելու է Հայաստանի կարիքավոր թոշակառուներին, այդ թվում` Վանաձորի ծերանոցում ապաստան գտած պապիկներին ու տատիկներին: Վանաձորի ծերանոցը Ազնավուրի նախաձեռնությամբ է հիմնադրվել եւ հանձնվել ՀՕՖ-ի հոգատարությանը: Ազնավուրն ու ՀՕՖ-ը արդեն տասը տարի ինչ համագործակցում են:**

**Ֆլորենս Ավագյանը ավելացնում է, որ Ազնավուրի դերակատարմամբ ռեժիսոր Ֆրանսուա Տրյուֆոյի «Կրակեք դաշնակահարի վրա» (1960 թ.) ֆիլմը մոտ ապագայում ցուցադրվելու է «Լինկոլն» կենտրոնի «Ուոլտեր Ռիդեր» թատրոնում:**

**Հ. Ծ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Քանդվեց փողերը լվանալու սխեման»

Վերջերս մամուլում սկսեցին լուրեր տպվել, թե սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը բացահայտել է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն Թամարա Պողոսյանի ֆինանսական մեքենայությունները: Ըստ շրջանառվող լուրերի՝ Թամարա Պողոսյանը մեծ աշխատավարձեր է վերագրել իրեն եւ իր բարեկամներին ու մսխել հիմնադրամի գումարները:

**Թամարա Պողոսյանը** սփյուռքի նախարարին ու լրատվամիջոցներին անպատասխան չթողեց, նրա պատասխանը «չուշացավ»: Երեկ հիմնադրամի գործադիր տնօրենը ասուլիս տվեց: Նախ լրագրողներին տեղեկացրեց, որ 2010-ի հուլիսից առ այսօր ինքն ու Հրանուշ Հակոբյանը միասին ոչ մի անգամ չեն խոսել հիմնադրամի խնդիրներից, ծրագրերից ու ֆինանսներից: Սփյուռքի նախարարը նաեւ հիմնադրամի անդամ է ու հոգաբարձուների խորհրդի նախագահը: Բանախոսն ասում է, որ հոգաբարձուների խորհրդի նախագահի տիկին Հակոբյանը լիազորությունները ամբողջովին տվել է սփյուռքի փոխնախարար Ստեփան Պետրոսյանին. «Սակայն լավ կլիներ՝ վերջինս չընդուներ այդ լիազորությունները, ու տիկին Հակոբյանը ստիպված կլիներ որոշակի հարցեր ինձ հետ քննարկել, ու այսօր այս վիճակի առաջ կանգնած չէինք լինի»: Բանախոսն ավելացնում է, որ Հրանուշ Հակոբյանի՝ հոգաբարձուների խորհրդի անդամ, առավել եւս նախագահի լինելը հակասում է հիմնադրամի կանոնադրությանը, որը հաստատվել է կառավարության որոշումով. «Տիկին Հակոբյանի՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի, հիմնադրամի անդամ դառնալն ու հիմնադրամի բյուջեն մշակույթի նախարարությունից սփյուռքի նախարարություն տեղափոխելը եղել է քաղաքական որոշումների արդյունքում»:

Տիկին Պողոսյանն ասուլիսի ընթացքում ոչ միայն պաշտպանում էր իրեն, այլեւ իր հերթին մեղադրում Հրանուշ Հակոբյանին: Նրա խոսքով՝ հոգաբարձուների խորհրդի մի նիստի ժամանակ տիկին Հակոբյանը հիմնադրամի բյուջեից 12 միլիոն 700 հազար դրամ հատկացրել է այլ կազմակերպությունների. «Այսինքն՝ հոգաբարձուների խորհրդի նախագահն ու անդամները իրար միջեւ շատ գեղեցիկ ձեւով բաժանում են այդ գումարը: Սփյուռքի նախարարն ինքնուրույն ու միանձնյա տնօրինել է հիմնադրամի ֆինանսական գործառույթները»: Շարունակելով մեղադրանքների շարքը՝ տիկին Պողոսյանը նաեւ հայտարարեց. «Հրանուշ Հակոբյանը, օգտագործելով իր պաշտոնական դիրքը, սփյուռքի նախարարության 50 միջոցառումներ գրել է մեզ վրա: Իսկ ես թղթերը չստորագրեցի, ու նախարարության փողերը լվանալու սխեման քանդվեց, տիկին Հակոբյանը կանգնեց փաստի առաջ եւ որոշեց վրեժխնդիր լինել»:

Վրեժխնդրության վերաբերյալ «**Ազգը**» պարզաբանումներ ստացավ նաեւ սփյուռքի նախարարությունից. մամուլի ու հասարակայնության հետ կապերի վարչության պետ **Թեւոս Ներսիսյանը** Թամարա Պողոսյանի մեղադրանքները հերյուրանք որակեց. «Նման հերյուրանքների համար նույնիսկ կարելի է դատի տալ, խեղճ Թամարա Պողոսյան, նա կարող է շատ տուժել: Անհիմն մեղադրանքների ու խոսքերի համար շատ հնարավոր է, որ Հրանուշ Հակոբյանը դատի տա նրան»: Ինչ վերաբերում է հիմնադրամի կանոնադրությունն ու կառավարության որոշումը խախտելուն, Թեւոս Ներսիսյանը նշեց, որ սփյուռքի նախարարությունն ու հոգաբարձուների խորհրդի նախագահը օրենքի ոչ մի կետ էլ չեն խախտել: Զրուցակիցս պատմեց, որ կառավարությունը 18 միլիոն դրամ գումար է հատկացրել ծրագրեր կատարելու համար.



«Իսկ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամում, չգիտես ինչու, համարում էին, որ պետական փողերն առանց [illegible] ձեւով կարելի է ղեկավարել ու յուրացնել: Մի խոսքով՝ այդ ամենին վերջ տրվեց»: Երեկվա ասուլիսի ժամանակ Թամարա Պողոսյանն էլ իր հերթին նշեց. «Մենք արդեն լուծարվածի հաշիվ ենք»:

Ցավալի է, որ հոգեւոր նշանակություն ունեցող հարցերի շուրջը նման աղմուկներ են բարձրանում: «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամը Հայաստանի, Սփյուռքի ու Լեռնային Ղարաբաղի միջեւ եղել է յուրահատուկ կամրջող օղակ, որը չպետք է դառնար շահարկման թեմա, մանավանդ որ հարյուրհազարավոր հայեր տարբեր երկրներում սպասում են հիմնադրամի ծրագրերին եւ ուզում են վստահել դրանք իրագործողներին:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# «Ժառանգությունը» մտածում է զինծառայողների արժանապատիվ թաղման մասին

«Ժառանգություն» խմբակցության պատգամավորները շրջանառության մեջ են դրել «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություն կատարելու օրինագծերի փաթեթ: Ըստ «Ժառանգության» պատգամավորների՝ նախաձեռնության նպատակն է օրենքով սահմանել կենսաթոշակառու զինծառայողի մահվան դեպքում նրա թաղման նպաստը: Փաթեթում այն սահմանվում է կենսաթոշակի տասնհինգապատիկի չափով, ինչպես եղել է ավելի վաղ օրենքում, սակայն կառավարությունը 2010թ. հոկտեմբերի 21-ի թիվ 1392-Ն որոշմամբ մի քանի անգամ նվազեցրել էր նախկինում օրենքով սահմանված գումարի չափը, ինչը, ըստ «Ժառանգության», հակասում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին: «Ստացվում է, որ մեր պետականության կայացման հարցում մեծ ավանդ ունեցող զինծառայողների համար կառավարությունը ոչ միայն արժանավայել կյանք, այլեւ արժանապատիվ թաղում չի կարողանում ապահովել», ասում են ժառանգականները: Այդպիսով, ըստ «Ժառանգության», իրենց օրենսդրական նախաձեռնության նպատակը երկրի պաշտպանների մահից հետո նրանց ընտանիքների նվազագույն պաշտպանվածության երաշխավորումն է՝ իբրեւ պետության տարրական պարտքի դրսեւորում:

Ս. Խ.

# Նոր հնարավորություններ՝ Հայաստանում սոցիալական բնակարանների զարգացման համար

Այսօր Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիան, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակը եւ «Հոլանդական միջազգային բնակարանային երաշխիքներ» կազմակերպությունը կստորագրեն փոխըմբռնման հուշագիր, որը նոր հնարավորություններ կստեղծի մեր երկրում սոցիալական բնակարանների զարգացման համար: Հուշագիրը ընդգրկում է լայն ոլորտ, ներառյալ բարենպաստ օրենսդրական դաշտի ձեւավորումը, ֆինանսական աջակցությունը, տեղական ինքնակառավարման մարմինների եւ համապատասխան կազմակերպությունների կարողությունների զարգացումը: Հուշագրի շրջանակներում նախատեսվում է ռեսուրսների ներգրավում՝ Դիլիջան, Հրազդան, Վեդի, Աշտարակ, Երեւան, Ապարան, Սպիտակ եւ Գավառ քաղաքներում մատչելի սոցիալական բնակարանային ներդրումային ծրագրերի իրականացման համար:

Ինչպես տեղեկացնում է ՄԱԶԾ մամուլի պատասխանատուն, միջոցառմանը կմասնակցեն Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիայի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը, ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերչեւան եւ «Հոլանդական միջազգային բնակարանային երաշխիքներ» կազմակերպության Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի տարածաշրջանային համակարգող Մարի-Օդիլ Զանդերսը:

Ս. Ս.

# Վարորդական վկայականներ՝ ապօրինի վճարները գերազանցում են անօրինական վճարներին

Պետական կառույցների կողմից քաղաքացիներին մատուցվող տարբեր ծառայությունների (մեքենաների գրանցում, նոտարական ծառայություններ, անձնագրային բաժիններ եւ այլն) որակին, այստեղ գանձվող ապօրինի վճարների մասին մեր թերթում բազմիցս ենք անդրադարձել: Արձագանքները տարբեր էին:

Նոտարական մեկ գործարքի դիմաց 15-25 հազար դրամ ապօրինի վճարների մասին մեր հրապարակմանը («Որն է ամենաշահութաբեր «բիզնեսը» Հայաստանում» 25.02.2010 թ.) ի պատասխան արդարադատության այն ժամանակվա նախարարը փորձեց արդարանալ եւ հերթապահ խոստումներ տվեց «անուններ ասեք, պարզենք» տարբերակով: Մեր հրապարակմանն անդրադարձավ նաեւ կառավարության «Հրապարակում» հաղորդումը, որտեղ նույնպես բերվեցին կոնկրետ վկայություններ, բայց նախարարը տվեց այս «գրողական» պատասխանը:

Անձնագրային բաժիններում հերթերի եւ անտեսանելի «բարեփոխումների» վերաբերյալ մեր հրապարակման («Անտեսանելի «բարեփոխումներ» ոստիկանության անձնագրային բաժիններում», 19.02.2011 թ.) անուղղակի արձագանքն այն էր, որ այս օրերին որոշակի տարիքի երեխաների գրանցում է կատարվում: Ինչի պատճառով էլ հերթեր են գոյացել: Այդուհանդերձ, այս ոլորտում իրական բարեփոխումներ կատարվել են միայն անձնագրերի եւ վիզաների վարչությունում՝ կապված վիզաների տրամադրման հետ եւ Նոր Նորքի անձնագրային բաժնում: Մեկ անգամ եւս ընդգծում ենք, որ անձնագրային մնացած այլ բաժիններում, բացի ԵԱՀԿ գրասենյակի ֆինանսավորած տեղեկատվական պլակատներից, ուրիշ փոփոխություն տեղի չի ունեցել: «Մեկ պատուհան» կոչված համակարգը այստեղ գոյություն չունի:

Ճանապարհային ոստիկանության մեքենաների գրանցմամբ զբաղվող բաժնում ծառայությունների բացահայտ ապօրինի վաճառքի մասին մեր հրապարակումն էլ («Որքա՞ն են խժռում մեր «գայիշնիկները» ավտոմեքենան գրանցելիս», 15.09.2009թ.), որտեղ մանրամասն նկարագրել էինք, թե որ փուլին որքան ապօրինի գումար է գանձվում, մնաց անարձագանք: Հիշեցնենք, որ այդ կառույցում մեքենայի գրանցման համար, չհաշված օրինական վճարները, քաղաքացիները 35-40 հազար դրամ կաշառք են հարկադրված լինում տալ:

Պետական ծառայությունների որակի խնդրին կառավարության վերջին նիստերից մեկում անդրադարձավ նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը, նշելով, որ կառավարությունը պարտավոր է օպերատիվ միջոցներ ձեռնարկել դրանք բարելավելու եւ կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու համար: Նա հիշատակեց մեքենաների տեխզննման ոլորտում կատարված փոփոխությունները, որի շնորհիվ ապօրինի գանձվող 5 հազար դրամների վճարումն անհնար կլինի: Ըստ վարչապետի, կոռուպցիոն ռիսկերի վերացման ուղղությամբ հաջորդ քայլերը լինելու են մեքենաների գրանցման եւ վարորդական իրավունքների տրամադրման գործընթացներում: Եթե մեքենաների գրանցման մասին արդեն գրել ենք, ապա վարորդական իրավունքների տրամադրման ժամանակ կատարվող ապօրինի վճարումներին դեռ չենք անդրադարձել:

Գաղտնիք չէ, որ ավտոդպրոցների աշխատակիցները հիմնականում համաձայնության են գալիս որակավորման քննություններ ընդունող վարորդական վկայականներ տվող ճանապարհային ոստիկանության ստորաբաժանումների աշխատակիցների հետ: Քաղաքացին կարող է, վճարելով որոշակի գումար, չհաճախել դասընթացների, բայց ստանալ վարորդական իրավունք: Եթե վարորդական իրավունք ստանալու համար մեր քաղաքացիները ծախսում են մոտ 140-175 հազար դրամ, ապա օրինական վճարումները այդ գումարից ընդամենը 35-45 հազար դրամ են կազմում: Օրինական վճարներն են՝ քննության համար պետական տուրքը՝ 3 հազար դրամ, ճանապարհային ոստիկանության ծառայության վճարը՝ 10 հազար դրամ, վարորդական իրավունքի վկայականի համար պետտուրքը՝ 12 հազար դրամ, ավտոդպրոցի դասընթացի վճարը՝ 10-20 հազար դրամ: Մինչդեռ մնացած բոլոր վճարները անօրինական են: Մասնավորապես, պոլիկլինիկայից տեղեկանք՝ 5-10 հազար դրամ, նարկոլոգիական դիսպանսերից տեղեկանք՝ 5 հազար դրամ, հոգեբուժական հաստատությունից տեղեկանք՝ 5 հազար: Սրանց էլ ավելացնենք քննական հանձնաժողովի դրական որոշման համար վճարվող 30-40 հազար դրամը, դասընթացներին չհաճախելու եւ ավարտական քննությունները դրական հանձնելու համար վճարվող 60-70 հազար դրամը:

Մնում է միայն այս գումարները բազմապատկել տարեկան տրվող վարորդական վկայականների թվին, պարզելու համար, թե որքան ապօրինի գումարներ են շրջվում այս գործընթացում: Տեղեկացնենք, որ, 2009-ի տվյալներով, տրվել է 53 հազար վարորդական վկայական:

Իսկ թե ինչպե՞ս է կառավարությունը վերացնելու կոռուպցիան այստեղ, ինչպես խոստացել է վարչապետը, պարզ կդառնա մոտ ապագայում: Կհետեւենք եւ կատարված փոփոխությունները կներկայացնենք մեր ընթերցողներին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Տեխզննում՝ առանց կաշառքի

Երեկ Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ, անդրադառնալով ՀՅԴ-ական Արա Նռանյանի այն դժգոհությանը, թե կառավարության որոշման արդյունքում տեխզննման համար քաղաքացիները, ճիշտ է, այլեւս տեխզննման կենտրոններում չեն վճարում, բայց բանկերո՛ւմ են վճարում, վարչապետ Տիգրան Սարգսյանը նկատեց, թե ուսումնասիրությունները բացահայտել են ոլորտում լրջագույն պրոբլեմներ. տալոնները տրվում էին առանց տեխզննման, եւ այդ հիվանդությունը համատարած բնույթ է կրել: Որ տեխզննման կայանները 5-հազարական դրամ չշորթեն՝ առանց տեխզննման տալոն տալու, կառավարությունը որոշում է ընդունել, որը բխում է 300 հազար մեր քաղաքացիների շահերից, իսկ տեխզննում իրականացնող կայանների միջեւ պետք է լինի մրցակցություն, նրանք պատշաճ ծառայություններ պետք է մատուցեն մեր քաղաքացիներին, որոնք ստանալով այդ կտրոնները՝ կարող են իրենք ընտրել բարենպաստ ծառայություն առաջարկող կայանը եւ ստիպված չեն լինի այդ 5 հազար դրամ կաշառքը կայաններին տրամադրել: Կառավարությունն էլ պետք է վերահսկի, որ բոլոր ավտոմեքենաները տարվա ընթացքում տեխզննում անցնեն՝ ոստիկանությունն ունենալու է համակարգչային ծրագիր, ինչը հնարավորություն է տալու վերահսկել ՀՀ տարածքում մեքենաների տեխզննում անցնելու գործընթացը: Մի խոսքով՝ կառավարության նպատակն է եղել այս բնագավառում վերացնել կոռուպցիոն ռիսկերը:

Ս. Խ.

## Հրապարակում

Չորս տարուց` 2015-ին, համայն աշխարհի հայությունը նշելու է Հայոց մեծ եղեռնի հարյուրամյակը, եւ չնայած զանգվածային նախապատրաստական աշխատանքները դեռեւս այնքան էլ տեսանելի չեն, այդուհանդերձ շրջադարձային այդ տարեթիվը յուրաքանչյուր հայի հոգու խորքում է ու մտքի մեջ:

Նրանք, ովքեր ժամանակին մոռանալու եւ ներելու կողմնակիցներն էին, ի վերջո հասկացան, որ անցած հարյուր տարիների ընթացքում ցեղասպանությունը ոչ միայն չմոռացվեց, այլեւ այդ չարաբաստիկ ողբերգությունը միջազգային ճանաչմանն արժանացնելու ջանքերը հետզհետե առավել մեծ թափ ստացան` փոխանցվելով սերնդեսերունդ:

Ցեղասպանությունից փրկվածները քով քովի գալով կազմակերպվեցին որպես համայնքներ` դիմակայելու համար ժխտողական մարտահրավերներին: Մի ամբողջ ազգ բնաջնջելուց եւ նրա պատմական հայրենիքին տիրանալուց հետո թուրքերն իրենց ժխտողական քաղաքականությունը տարածեցին ամենատարբեր բնագավառներում` ակադեմիականից դեպի զանգվածային լրատվամիջոցներ, քաղաքականություն եւ մշակույթ: Բարեբախտաբար, հայերս կարողացանք պայքարել այդ մարտահրավերների դեմ` հրատարակելով բազմաթիվ ակադեմիական մակարդակի հատորներ, հակահարվածելով թուրքերին քաղաքականության եւ լրատվության ասպարեզներում: Բայց մենք դեռ շատ բան ունենք անելու:

Մեծ եղեռնի հարյուրամյակը շրջադարձային է լինելու, եւ մենք պետք է կարողանանք մեր ջանքերն ավելացնել եւ նախատեսված աշխատանքներն ավելի լավ կազմակերպել, որպեսզի պատշաճ ձեւով հարգած լինենք մեր զոհերին:

Մոտավորապես մեկ դար պահանջվեց, որ ճաքեր առաջանային Թուրքիայում լռության պատի վրա: Այսօր թուրք պատմաբաններ, գրողներ, լրագրողներ եւ քաղաքական գործիչներ զբաղվում են Հայոց ցեղասպանության հարցերով եւ փորձում են իրազեկ դարձնել հասարակության լայն խավերին, որոնք մինչ օրս սնվել են պատմության ամեն տեսակի նենգափոխված տարբերակներով: Անսպասելիորեն քրդերը, որոնք մեղսակիցներ էին եւ ակտիվ մասնակցություն էին ունեցել ցեղասպանության իրականացմանը, այժմ դարձել են Թուրքիայում Հայոց ցեղասպանության ճանաչմանն ի նպաստ ամենաբարձրաձայն արտահայտվողները, որովհետեւ իրենք էլ իրենց հերթին ճաշակել են թուրք առաջնորդների ցեղասպանական քաղաքականության պտուղները:

Սակայն մինչ նենգափոխությունների հիման վրա կառուցված խաղաքարտե շենքը փլուզվում է, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը շարունակում է համառորեն հայերից գեթ մեկ ապացույց պահանջել, որ թուրքերն իրոք ցեղասպանություն են իրականացրել հայերի հանդեպ: Նրա վերջերս կայացած այցելությունը Մոսկվա ծրագրված էր համընկնելու Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի ստորագրման 90-րդ տարեդարձին: Այդ պայմանագրերը ստորագրվել էին 1921 թվին Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի եւ ռուսական հեղափոխության ղեկավար եւ ԽՍՍՀ-ի հիմնադիր Վլադիմիր Իլյիչ Լենինի միջեւ: Դրանցով Թուրքիային էին հանձնվում պատմական Հայաստանի տարածքները: Էրդողանը Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւին նվիրեց «Բարեկամության եւ եղբայրության պայմանագրի» պատճենը, հայտարարելով մամուլի ասուլիսի ժամանակ, որ «այս փաստաթուղթը շրջադարձային է մեր պատմության համար, քանի որ դրանով Մոսկվան ճանաչում է մեր արեւելյան սահմանները»: Ակնարկը Հայաստանին էր ուղղված, քանի որ Հայաստանը կուլ չէր տվել Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը, թուրքերն այժմ գնդակն ուղարկում էին Մոսկվա:

Շատ պատմաբաններ եւ իրավաբաններ են քննարկել եւ հարցականի տակ դրել այս պայմանագրի օրինականության հարցն այն պատճառով, որ Մոսկվայի սույն պայմանագիրը ստորագրվել է 1921 թվի մարտի 16-ին խորհրդային կառավարության կողմից` առանց Հայաստանի մասնակցության: Իսկ Կարսի պայմանագիրը 1921-ի նոյեմբերի 13-ին դարձյալ Մոսկվայի կողմից պարտադրվեց Հայաստանին:

Ավելին, Աթաթուրքի Թուրքիան այդ ժամանակ դեռ չէր էլ ճանաչվել որպես գործող կառավարություն, որպեսզի կարողանար միջազգայնորեն պարտավորեցնող որեւէ պայմանագիր կնքել որեւէ երկրի հետ: Այդ պայմանագիրն այժմ առավել եւս ուժը կորցրած պետք է համարել, քանի որ Մոսկվան այլեւս Թուրքիայի հետ սահման չունի, որպեսզի հայկական տարածքներ զիջի նրան կամ մի որեւէ այլ կողմի:

Այնպես որ Էրդողանի թատերական ներկայացումն անքակտելի մասն էր կազմում թուրքական ժխտողական քաղաքականության եւ նպատակ ուներ խափանելու հետագա որեւէ տարածքային պահանջ Հայաստանի կողմից: Թուրքիայի նախկին բռնակալներից մեկը` Քենան Էվրենը, մի ժամանակ զգուշացրել էր հայերին` ասելով, որ «տարածքները արյունով են ձեռք բերում: Եթե կարող եք, եկեք եւ վերցրեք Թուրքիայի տարածքներից որեւէ մեկը»: Մենք պետք է լուրջ վերաբերվենք Էվրենի խոսքերին: Պատմությունը լի է անակնկալներով:

Էրդողանի մի այլ խորհրդանշական գործողությունը Կարսում տեղադրված բարի կամքի հուշարձանի ապամոնտաժման աշխատանքների հետեւողականությունն է:

Ցեղասպանության հարյուրամյակը ամենալավ առիթն է, որ Հայաստանն էլ իր հերթին հանդես գա խորհրդանշական մի նախաձեռնությամբ: Հայաստանում, ճիշտ է, բազմաթիվ հուշարձաններ կան, բայց այս մեկը եզակի իմաստ կարող է ունենալ: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը հիանալի կոթող է` հավերժացնելու համար մեր զոհերի հիշատակը: Բայց մենք դեռ չունենք մի հուշարձան, որը հավերժացներ զանգվածաբար սպանված մեր մտավորականների, գրողների եւ արվեստագետների հիշատակը: Զարմանալիորեն պատմության մեծ ոճրագործները միշտ էլ եղել են նաեւ հմուտ գրաքննադատներ, որոնք ընտրել են եւ ոչնչացրել մշակույթի տարբեր բնագավառների սերուցքը կազմող ներկայացուցիչներին: Թալեաթ փաշայի խորամանկություններից մեկն էր` զրկել Օսմանյան կայսրության հայկական բնակչությունն իր մտավորականներից նախքան զանգվածային տեղահանության եւ բնաջնջման առաջնորդեր մնացյալներին: Նա ընտրեց Գրիգոր Զոհրապին, Դանիել Վարուժանին, Երուխանին, Կոմիտասին, Սիամանթոյին, Ռուբեն Սեւակին եւ մյուսներին, որպեսզի սպանի: Զոհրապի գանգը ջախջախվեց քարով, Վարուժանի մասերը կտրատվեցին եւ աչքերը կուրացվեցին նախքան նրա սպանությունը:

Մենք չունենք եւ չենք ունեցել մի հավաքական հուշարձան` նվիրված մեր այս մեծերին, որոնց մտավոր զարգացածությունը թիրախ էր դարձել նրանց երիտթուրքերի արյունռուշտ վարչակարգի համար:

Պատմության մեկ այլ ոճրագործ` Ստալինը նույնպես ապացուցեց, որ լավ «գրաքննադատ» է: Նա ընտրեց Չարենցին, Մահարուն, Զապել Եսայանին, Բակունցին եւ Մկրտիչ Արմենին, որպեսզի Սիբիր աքսորի եւ կամ տեղնուտեղը սպանի: Մեր այս մեծերը սպանվեցին, որպեսզի լռեն եւ չարտահայտեն իրենց խիզախ ու ինքնատիպ մտքերը:

Կատարվածից մոտ հարյուր տարի անց գործնականորեն հնարավոր չէ ներկայիս Թուրքիայի սահմաններում որոնել մեր սպանված գրողների մնացորդները: Բայց անհավատալի է, որ Չարենցի մնացորդները հնարավոր չէ գտնել Հայաստանի սահմաններում: Գուցե դեռ ողջ են այն մարդիկ, որոնց ձեռքերը ողողված են արյունով:

Հետեւաբար, բոլոր մեր սպանված գրողներին ու մտավորականներին նվիրված հուշարձանը ենթադրում է, որ ունենա երկու թեւ: Մի թեւի վրա նշվեն ցեղասպանությանը, իսկ մյուսում` Ստալինի քմահաճ վերաբերմունքին զոհ գնացած մտավորականների անունները: Հուշարձանը կարելի է զետեղել հայ-թուրքական ներկա սահմանի որեւէ հատվածում` հիշեցնելու համար թուրքերին իրենց անասելի ոճրագործության մասին եւ խորհրդանշելու, որ հայերն ունեն պահանջատիրական ձգտումներ իրենց պատմական տարածքների նկատմամբ:

Եռաբլուրի հուշարձանը նվիրված է բոլոր նրանց, ովքեր ընկել են հայկական հողերի պաշտպանության համար, զորավար Անդրանիկից մինչեւ Վազգեն Սարգսյան եւ բոլոր մյուսները, որոնք զոհ գնացին ղարաբաղյան պատերազմին:

Հարյուրամյակի առթիվ կառուցվելիք մեր առաջարկած հուշարձանը նաեւ առիթ կընձեռի հայրենի մտավորականությանը` վերանայելու եւ վերագնահատելու Արեւմտյան Հայաստանի գրողներին եւ մտավորականությանը: Երբ Հայաստանը խորհրդային կայսրության մաս դարձավ, արժեքները համակարգման ենթարկվեցին եւ ժամանակի ընթացքում սառեցվեցին: Բոլոր նրանք, ովքեր այդ կայսրության սահմանի ներսում էին` ընկալվում էին որպես ազգային հարստություն, մյուսները` Արեւմտյան Հայաստանի ներկայացուցիչները, նույն հնարավորությունը չունեին:

Հայաստանի փողոցների անունները նվիրված են Արեւելյան Հայաստանի այս կամ այն գրողին կամ մտավորականին, եւ շատ չնչին բացառությամբ` Արեւմտյան Հայաստանի մտավոր կարողությունների ներկայացուցիչներին, որոնք դեռեւս իրենց արժանի տեղը չեն գրավում հայրենիքում:

Մինչդեռ նրանք այսօր, երբ Սփյուռքը կորցնում է իր դիմագիծը, ավելի քան երբեւէ արժանի են լրջագույն գնահատանքի:

Եղեռնի հարյուրամյակի ճանապարհը լի է մարտահրավերներով, եւ վերոնշյալ հուշարձանը ուղղելով անցյալի որոշ սխալներ, միաժամանակ կազդարարի մի նոր, առողջ, ուժեղ եւ հուսալի ապագա մեզ համար:

# Առաջ շարժվելով դեպի Եղեռնի հարյուրամյակը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Դետրոյթ, ԱՄՆ
Թարգմ. Հ. Ծ.

# Կուզիկին, իրոք, գերեզմանը կուղղի

«Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը մասնակցում է այդ ուղղությամբ աշխատանքին` արտահայտելով հակամարտության լուծման իր հետաքրքրվածությունը: Բայց այսօր ամենակարեւորը միջազգային իրավունքի կյանքի կոչումն է եւ դրա իրացումը». մեջբերման հեղինակն Իլհամ Ալիեւի աշխատակազմում արտաքին քաղաքականության հարցերով պատասխանատու Նովրուզ Մամեդովն է:

Ստացվում է, որ պաշտոնական Բաքուն, մեղմ ասած, ՌԴ նախագահի նախաձեռնությամբ անցկացվող քննարկումներից դժգոհ է եւ կարծում է, որ դրանք «միջազգային իրավունքի կյանքի կոչմանը եւ իրացմանը չեն նպաստում»:

Այո, այդպես է ենթադրվում, քանի որ քիչ հետո Նովրուզ Մամեդովը բացում է փակագծերը. «Իրոք, եթե միջազգային իրավունքի շրջանակներում Հայաստանի վրա ճնշում գործադրվեր եւ այդ առթիվ նրա առջեւ կոնկրետ խնդիրներ դրվեին, Հայաստանը ոչինչ անել չէր կարող: Բայց, ցավոք, այսօր Հայաստանի վրա ոչ մի ճնշում չի գործադրվում»:

Սույն «դարակազմիկ միտքը» տարբեր վարիացիաներով Ադրբեջանում հնչեցնում են արդեն շուրջ երկու տասնամյակ` նախագահից մինչեւ ամենավերջին «տնային տնտեսուհին»: Եվ ինչքան շատ են այդ մասին խոսում, այնքան, ըստ երեւույթին, միջազգային հանրության հետաքրքրությունը նվազում է: Այն պարզ պատճառով, որ միջազգային հանրությունը քաջատեղյակ է խնդրի էությանը, հակամարտության ընթացքին եւ ներկա իրավիճակին: Ըստ այդմ, նա «հուշարարի» կարիք չունի:

Իսկ Ադրբեջանում, դժբախտաբար թե բարեբախտաբար, տիրապետողը միջազգային հանրության վերաբերմունքի խեղաթյուրումն է: Նովրուզ Մամեդովն ասում է. «Վերջերս ԵԱՀԿ-ի ՄԽ-ի գնահատողական առաքելությունը դիտարկում է անցկացրել Ադրբեջանի` «Հայաստանի կողմից օկուպացված» (չակերտները մերն են- Վ. Ա.) տարածքներում»:

ԵԱՀԿ-ի ՄԽ-ի դաշտային առաքելությունն, իրականում դիտարկում անցկացրել է «ԼՂ շուրջը «ադրբեջանական օկուպացված» (չակերտները մերն են- Վ. Ա.) տարածքներում»: Տարբերությունն, ինչպես տեսնում ենք, հսկայական է. ԵԱՀԿ ՄԽ դիտորդները «Հայաստանի կողմից օկուպացված տարածքներ» ձեւակերպումը չեն օգտագործել: Ինչպես որ ժամանակին նման ձեւակերպում չի արել ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, երբ ընդունում էր հայտնի բանաձեւերը` Ադրբեջանին հորդորելով դադարեցնել ռազմական գործողությունները եւ ձեռնամուխ լինել խնդրի խաղաղ բանակցային կարգավորմանը: Ինչպես նաեւ եւ ՄԱԿ-ի ԱԽ-ն, եւ ԵԱՀԿ-ի ՄԽ-ի դաշտային առաքելությունը շատ հստակ առանձնացնում են «բուն Լեռնային Ղարաբաղը» եւ «նրա շուրջը «ադրբեջանական օկուպացված» (չակերտները մերն են- Վ. Ա.) տարածքները»:

Անկախ այն բանից, թե ո՞րն է ղարաբաղյան կողմի վերաբերմունքը միջազգային հանրության նման ընկալման նկատմամբ, իսկ դա կդրսեւորվի, երբ ԼՂՀ-ն կմասնակցի բանակցություններին, միջնորդության հայեցակարգն այն է, որ ԼՂ խնդիրն առանձնացվում է «նրա շուրջն օկուպացված տարածքներից»: Ինչպես պահանջում է միջազգային իրավունքը, որի անկյունաքարը ոչ թե հիպոթետիկ «տարածքային ամբողջականության», այլ իրական տարածքում ապրող ժողովրդի կամքի ազատ արտահայտության սկզբունքի հարգումն է:

Ընդունո՞ւմ է այս գերակայությունը պաշտոնական Բաքուն: Ո՛չ: Եվ դարձյալ` ո՛չ: Քանի որ Ադրբեջանը մի նպատակադրվածություն ունի` ամեն գնով ամեն ինչ վերադարձնել այն իրավիճակին, որից ծագել է բուն խնդիրը:

Այս հարցում, սակայն, նա չունի եւ չի էլ կարող ունենալ միջազգային հանրության աջակցությունը: Քանի որ այդ դեպքում ոչ թե խնդիր է լուծվում, այլ, ընդհակառակը, խնդիրներ են հարուցվում:

Այլ բան, եթե Ադրբեջանն ընդուներ, որ Լեռնային Ղարաբաղի հայ մեծամասնությունն իրացրել է ինքնորոշման իրավունք: Այդ դեպքում, թերեւս, «ԼՂ շուրջն օկուպացված տարածքների խնդիրը» հրատապ գիտակցվեր միջնորդների կողմից: Բայց հարցի նման ընկալում ու, մանավանդ, դրա օրակարգայնացում պաշտոնական Բաքուն չի դրսեւորում: Եվ այստեղ ո՛չ հայկական կողմերը, ո՛չ միջնորդներն այլ անելիք չունեն, քան պահպանել զինադադարը: Այն իրավիճակը, որ ներկա, թող որ փխրուն, բայց խաղաղության եւ հարաբերական կայունության միակ երաշխիքն է: Իսկ միջազգային հանրությանը պետք է խաղաղություն:

Իրականում, սակայն, թվում է, թե Նովրուզ Մամեդովը ոչ այնքան «օկուպացված տարածքների» ճակատագրով, որքան Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակով է մտահոգ: Իր խոսքը նա եզրափակել է «միջազգային կառույցներին, տարածաշրջանային եւ ոչ կառավարական կազմակերպություններին եւ այն երկրներին, որոնք Ադրբեջանում տեղի ունեցած որեւէ իրադարձության դեպքում ամբողջ աշխարհում տարաբնույթ տեղեկատվություն են տարածում» հասցեագրված հորդորով, որ «նրանք կարող էին իրենց կարծիքը հայտնել գնահատողական առաքելության հաշվետվության մասին»:

Ակնարկն, ինչպես ասում են, շատ է թափանցիկ. վերջին օրերին իրապաշտպան մի շարք կազմակերպություններ եւ Բաքվում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններ անհանգստություն են արտահայտել Ադրբեջանում ընդդիմության նկատմամբ գործադրվող բռնությունների շուրջ: Եվ Նովրուզ Մամեդովն անհանգստացած է: Ու չի էլ թաքցնում, այլ խնդրում է «նկատի ունենալ, որ Ադրբեջանն ավելի լուրջ խնդիր ունի»:

Ինչքա՞ն է շարունակվելու այս ֆարսը: Եվ արդյոք ժամանակը չէ՞, որ միջազգային հանրությունն Իլհամ Ալիեւին ակնհայտ հասկացնի, որ իրականությունը նենգափոխումից չի դադարում իրական լինելուց: Թե՞, ինչպես ասում են, «կուզիկին միայն գերեզմանը կուղղի»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Ստեփանակերտ

# ԵԽ-ն կարո՞ղ է օգնել Արցախին

Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը միջազգային տարբեր կառույցներ ներգրավելու Ադրբեջանի փորձերը շարունակվում են: Գուցե այս կերպ Բաքվում հույս ունեն, որ «թարմ ականջներին» առավել հեշտ կլինի համոզել ադրբեջանական կեղծիքի մեջ: Սակայն, ինչպես երեւում է, այս անգամ եւս միջազգային հանրությանը մոլորեցնելու Ադրբեջանի փորձերը ձախողվեցին: Ապրիլի 11-ին Ստրասբուրգում մեկնարկեց ԵԽԽՎ հերթական նստաշրջանը, որի բացմանը ելույթով հանդես եկավ կազմակերպության գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդը: Ադրբեջանական պատվիրակությունը հերթական անգամ առիթը բաց չթողեց՝ հիշատակելու այսպես կոչված «ադրբեջանական օկուպացված տարածքները»՝ բողոքելով, որ «ԵԽ-ն պատշաճ կերպով չի պաշտպանում Հայաստանին»: Խոսելով ԵԽ-ում որդեգրված բարեփոխումների կուրսի մասին՝ ադրբեջանցի պատվիրակը որոշեց կազմակերպությանը «ճիշտ ուղի» հուշել՝ նշելով, որ բարեփոխումների նպատակը ԵԽ-ն առավել «վճռական» դարձնելը պետք է լինի:

Ադրբեջանցի պատվիրակի այս յուրօրինակ մեկնաբանություններն առիթ հանդիսացան, որ կազմակերպության գլխավոր քարտուղարը եւս մեկ անգամ հիշեցնի Եվրոպայի խորհրդի գործառույթներն ու առաքելությունը եւ ադրբեջանցիների ուշադրությունը կրկին հրավիրի ղարաբաղյան կարգավորման գործող ձեւաչափին:

«Հակամարտության կարգավորումը, որը վկայակոչում եք, Մինսկի խմբի ձեռքերում է, որի անդամ Եվրոպայի խորհուրդը երբեւէ չի եղել: Ինչպես ավելի վաղ նշվել է, կարծում եմ, Մինսկի խումբն առավել մեծ ուշադրություն պետք է հատկացնի մարդու իրավունքների հարցերին, հետեւաբար այդ խնդրի շուրջը պետք է աշխատի Եվրոպայի խորհրդի հետ: Այնուամենայնիվ, այդ հարցում հաջողության չենք հասել: Ինչեւէ, մեր մայրցամաքում այսպես կոչված սառեցված հակամարտությունների կարգավորման հարցում առավել մեծ ուշադրություն պետք է հատկացնենք մարդու իրավունքներին»:

Այն, որ մարդու իրավունքների պաշտպանությունն առավել քան խնդրահարույց է հատկապես հակամարտության գոտիներում եւ այսպես կոչված չճանաչված քաղաքական միավորումներում, հայտնի էր վաղուց: Թերեւս վաղուց էր առաջացել անհրաժեշտությունը նման տարածքներում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներ մշակելու համար, ինչը, հաշվի առնելով միջազգային կառույցների գործառութային առանձնահատկությունները, առավելապես ԵԽ-ի իրավասությունների շրջանակում է: Նախ նշենք, որ չնայած մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող միջազգային փաստաթղթերի առկայությանը, չճանաչված կամ «կիսաճանաչված» (Կոսովո, Հս. Կիպրոս) երկրներում քաղաքական կարգավիճակը լուրջ խոչընդոտ է դրանցում ամրագրված իրավունքների իրացման համար: Ուստի, որպես մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առավել հեղինակավոր կառույց, հենց ԵԽ-ի խնդիրն է հանդես գալ համապատասխան նախաձեռնությամբ՝ ուղղված չճանաչված տարածքներում մարդու իրավունքների սահմանափակումների վերացմանը:

Առավել եւս, երբ Եվրոպայի խորհուրդը հանդես է գալիս հակամարտության գոտիներում, այս դեպքում՝ Արցախում, մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներով զբաղվելու պատրաստակամությամբ, այս տեսանկյունից կառույցը պարզապես պարտավոր է անմիջականորեն աշխատել ԼՂՀ-ի հետ: Այդ համագործակցությունը կարող է ենթադրել ինչպես իրավական խորհրդատվությունների տրամադրում, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության, հանդուրժողականության կառուցմանն ուղղված տարբեր ծրագրերի իրականացում տեղի քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ:

Եվ, իհարկե, մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը հնարավոր չէ իրագործել առանց այդ իրավունքների կոնկրետ սահմանափակումների մասին պատկերացման. ուստի, եթե Եվրոպայի խորհուրդն իրապես նպատակ է դրել կարգավորել մարդու իրավունքների սահմանափակումների հարցը հակամարտությունների գոտիներում, մասնավորապես Արցախում, ապա թերեւս առաջին հերթին անհրաժեշտ է մշտապես գործող գրասենյակ ունենալ Ստեփանակերտում, հատկապես որ նման փորձ ԵԽ-ն արդեն ունի (դեռեւս 1996-ից ԵԽ-ի գրասենյակներ էին գործում Կոսովոյում, Չեռնոգորիայում):

Ղարաբաղյան հակամարտության գոտում հումանիտար բոլոր սկզբունքների լուրջ խախտում է նաեւ դիպուկահարների առկայությունը, որոնց Ադրբեջանը հրաժարվում է դուրս բերել՝ չնայած բազմաթիվ հորդորներին: ԵԽ-ի՝ որպես մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցի գլխավոր խնդիրը մարդու անօտարելի՝ կյանքի իրավունքի պաշտպանությունն է, եւ իր սահմանած ոլորտներում գործունեության արդյունավետությունն ու ունեցած հեղինակությունն ապացուցելու համար ԵԽ-ին առաջին հերթին անհրաժեշտ է կարգավորել հենց այս հարցը:

Ինչ վերաբերում է ԵԽ-ԵԱՀԿ հնարավոր համագործակցությանը, թերեւս այս հարցում եւս որեւէ խնդիր չի առաջանա, եթե ԵԽ-ի նախաձեռնություններն ու գործողությունները լինեն միանշանակ անկեղծ, եւ մարդու իրավունքների պաշտպանության խնդրի ներքո կառույցը չփորձի ներթափանցել ԵԱՀԿ-ի գործունեության ոլորտ, մասնավորապես ղարաբաղյան կարգավորման գործընթաց: Իսկ ԵԽ-ի նպատակների արդարացիության մասին կարող է վկայել Մինսկի խմբի շրջանակներում քննարկվող բանակցային գործընթացի սկզբունքներին առնչվող հարցերի շրջանակին որեւէ կերպ չմիջամտելու մասին ԵԽ-ի հստակ ու աներկբա խոստումը:

**Ս. ՍԵՄԵՐՋՅԱՆ**

# Քադդաֆին հայտնել է զինադադարի իր պայմանները

*Ապստամբները Քաթարի օգնությամբ նավթ են վաճառել*

Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆին ընդդիմության ներկայացուցիչներին փոխանցել է զինադադարի իր պայմանները: Արաբական «Աշարք ալ Աուսաթ» թերթի տվյալներով, ընդդիմության ստեղծած Անցումային ազգային խորհրդին փոխանցվել է ընդամենը երեք պահանջ:

Քադդաֆիի առաջին պահանջն այն է, որ իրեն կենսաթոշակի ուղարկեն պատիվներով: Երկրորդ պահանջը իրեն որեւէ կարեւոր եւ խորհրդանշական պաշտոնի տրամադրումն է: Եվ վերջապես, Քադդաֆին պահանջում է, որ իշխանությունը փոխանցվի իր որդի Սեյֆ ալ Իսլամին:

Ավելի վաղ «**Ազգը**» գրել էր, որ Լիբիայի իշխանություններն ընդունել են Աֆրիկյան միության առաջարկած հաշտության ծրագիրը, իսկ ապստամբները մերժել են այն: Դրա հետեւանքով հրադադարի հաստատմանն ուղղված բանակցությունները ձախողվել էին: Ընդդիմությունը պահանջում է, որ Մուամմար Քադդաֆին եւ նրա ընտանիքի անդամներն անվերապահորեն հրաժարվեն իշխանությունից:

Լիբիայի քաղաքացիական պատերազմը բացասաբար է անդրադարձել երկրի նավթարդյունահանման ճյուղի վրա, հանգեցնելով նավթի համաշխարհային գների աճին: Բացի դրանից, բախումների ընթացքում վնասվել են երկրի որոշ հանքավայրեր:



Նման պայմաններում լիբիական նավթի արտահանումները ընդհատվել էին: Սակայն պարզվում է, որ Քաթարի իշխանությունները Անցումային ազգային խորհրդին օգնել են վաճառել նավթի որոշ քանակ: Այդ մասին հաղորդում է «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը, վկայակոչելով քաթարյան աղբյուրներ:

Բացի դրանից, Քաթարը լիբիացի ապստամբների գլխավոր քաղաք Բենգազիի նավահանգիստ է ուղարկել նավթամթերքներ, այդ թվում դիզելային վառելիք եւ բենզին: Քաթարի էներգետիկայի նախարարությունում հայտարարել են, որ այսուհետեւ էլ են միջնորդի դեր կատարելու լիբիական նավթի վաճառքում, քանի որ անհրաժեշտ են համարում «օգնել Լիբիայի ժողովրդին»:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ Քաթարն ապստամբներին օգնել է վաճառել նավթի մի քանակ, որը գնահատվում է 120 մլն դոլար: Գործարքը կատարվել է անցյալ շաբաթ:

Թե ո՞վ է նավթի վերջնական գնորդը, չի հաղորդվում: Խոսքը Թոբրուկի նավահանգստից դուրս բերված 1 մլն բարել նավթի մասին է:

ԵԳԻՊՏՈՍ

# Մուբարաքը եւ նրա որդիները կալանավորվել են



Եգիպտոսի նախկին նախագահ Հոսնի Մուբարաքը եւ նրա երկու որդիները (Գամալ եւ Ալա) 15 օրով կալանավորվել են կաշառակերության կասկածանքով: Նրանք կալանքի տակ են առնվել գլխավոր դատախազության որոշման համաձայն, նշում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Նախկին նախագահի նկատմամբ քննություն է անցկացվում հակակառավարական ցույցերի մասնակիցների գնդակոծման դեպքերի կապակցությամբ: «**Ազգն**» արդեն գրել է այդ մասին: Քննիչները փորձում են պարզել, արդյոք Մուբարա՞քն է ուժային կառույցներին կարգադրել զենք գործադրել ցուցարարների դեմ: Բացի դրանից, պետության նախկին ղեկավարին կասկածում են պաշտոնեական լիազորությունների չարաշահման մեջ:

Ներկայումս Մուբարաքը Շարմ ալ Շեյխի միջազգային հիվանդանոցում է, ուր ապրիլի 12-ի երեկոյան տեղափոխվել էր արյան գերճնշման եւ սրտի աշխատանքի խախտման պատճառով: Գլխավոր դատախազության քննիչները հենց հիվանդանոցում հարցաքննել էին նրան, ինչպես նաեւ շփվել էին նրա որդիների հետ:

Վերջիններիս կասկածում են կաշառակերության եւ հակակառավարական ցույցերի դաժան ճնշման մեջ: Անվտանգության ծառայության գեներալ-մայոր Մուհամմեդ ալ Քաթիբի խոսքերով, 82-ամյա նախագահի երկու որդիները Կահիրեի բանտում կալանքի տակ կմնան, քանի դեռ շարունակվում է քննությունը:

Կաշառակերությունից բացի, Մուբարաքը եւ նրա ընտանիքի անդամները կասկածվում են փողեր լվանալու, ապօրինաբար հարստանալու, արտերկրում բանկային հաշիվներ եւ անշարժ գույք ունենալու մեջ: Ենթադրվում է, որ Մուբարաքն է մեղավոր հարյուրավոր ցուցարարների մահվան համար: Նրա որդիներից մեկը՝ Գամալը, 2011-ի մարտին ինքնասպանության փորձ էր արել այն բանից հետո, երբ զինվորականները նրա ընտանիքից պահանջել էին մի շարք բանկերի հաշիվներում վերականգնել այնտեղից հանված միլիոնավոր դոլարները:

Ժողովրդական հուզումների պայմաններում Մուբարաքը փետրվարի 11-ին հրաժարական էր տվել, իշխանությունը փոխանցելով բանակին: Եգիպտոսում զանգվածային խռովությունների գլխավոր պատճառներն են համարվում կաշառակերությունը եւ սոցիալական անարդարությունը: Հունվար-փետրվարին բողոքի զանգվածային ցույցերի եւ դրանց հաջորդած անկարգությունների ընթացքում սպանվեցին 365 եւ վիրավորվեցին 5000 անձինք:

Նախկին վարչակարգի հնարավոր հանցագործությունների քննության շրջանակներում հարցաքննվել են մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ: Կաշառակերության մեղադրանքով ավելի վաղ կալանավորվել կամ տնային կալանքի էին ենթարկվել ֆինանսների, զբոսաշրջության, բնակարանաշինության, տեղեկատվության նախկին նախարարները, ինչպես նաեւ ՆԳՆ-ի ղեկավարը եւ Մուբարաքի վարչակազմի առանցքային աշխատակիցներից մեկը՝ նրա դիվանատան պետ Զաքարիա Ազմին: Իսկ ապրիլի 10-ից 15-օրյա կալանքի տակ է առնվել երկրի նախկին վարչապետ Աիմեդ Նազիֆը:

# Վրացիների՝ հրեական թեմայով «կատակները»

«Ո՞րն էր Ադոլֆ Հիտլերի հիմնական ձեռքբերումը», այսպիսի մի հարցի «Ուրախների եւ հնարամիտների ակումբի» վրացական տարբերակում արձագանքել են. «Ադոլֆ Հիտլերի հիմնական ձեռքբերումը յուրաքանչյուր հրեական ընտանիքի անվճար գազով ապահովելն էր»: Ինչպես տեղեկացնում է «Բազմազգ Վրաստան» կազմակերպությունը, ապրիլի 4-ին վրացական «Իմեդի» հեռուստաընկերության եթերում հաղորդման շրջանակներում ընթացող այս խաղի վրացի մասնակիցներն այսպիսի պատասխան են տվել՝ որպես «կատակ»:

Խաղի մասնակից «Կոզա Նոստրա»՝ Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի թիմի վերը նշված պատասխանի առնչությամբ որեւէ կերպ չի արձագանքել անգամ խաղի ժյուրիի կազմում ներգրավված Վրաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար Լադո Վարձելաշվիլին: Վերջինս եթերում անգամ «կատակին» արձագանքել է ժպիտով:

«Բազմազգ Վրաստանը» հայտարարում է, որ ինչպես հարցը, այնպես էլ պատասխանը գնահատվում են որպես աներեւակայելի: «Կատակը հակասեմական է, ատելություն է հրեական ծագում ունեցողների հանդեպ, որը վիրավորական ձեւով է խոսում Հոլոքոստի ողբերգության մասին...», նշված է կազմակերպության հայտարարության մեջ: «Բազմազգ Վրաստանը» դիմել է Վրաստանի նախագահին, խորհրդարանի նախագահին, վարչապետին, Լադո Վարձելաշվիլուն, ինչպես նաեւ «Իմեդի» հեռուստաընկերության ղեկավարությանը, Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի ռեկտորին պատասխանատվության կանչելու պահանջով, որպեսզի ներողություն խնդրեն այդօրինակ կատակի համար՝ հեռարձակելով դա հեռուստատեսությամբ:

**Ա. Հ.**

Մշակույթ

# Ադրբեջանը՝ քաղաքակրթության թշնամի

Ադրբեջանում հայկական հուշարձանների ուսումնասիրությամբ հուշարձանագետ **Սամվել Կարապետյանը** զբաղվում է ավելի քան 30 տարի: Ադրբեջանում հայկական հուշարձանների ավերումը սկսվել է անցյալ դարի 70-ականներից: Հայկական հուշարձանների, հայկական տարի հանդեպ Ադրբեջանի անհանդուրժողականությունը պետական մակարդակով ակնառու էր: Խորհրդային տարիներին ադրբեջանական իշխանությունները ծոցյալ կերպով էին իրականացնում հայկական հուշարձանների ոչնչացումը: Արցախյան պատերազմի տարիներին եւ դրանից հետո ադրբեջանական իշխանությունների գործելակերպը փոխվեց. բացահայտ սկսեցին քանդել ու ավերել եկեղեցիներն ու գերեզմանները:

Ադրբեջանցիներն արդեն 4 տասնամյակ իրենք իրենց ու աշխարհին փորձում են համոզել, որ իրենց տարածքում քրիստոնեական հուշարձանները պատկանում են իրենց «նախնիներին»՝ քրիստոնյա աղվաններին: Պետական հովանավորությամբ բազմաթիվ գրքեր են հրատարակվել, որտեղ հայկական ճարտարապետությունը ներկայացվում է որպես աղվանական: Ըստ հուշարձանագետի, Կուր գետի ձախակողմյան հատվածում հայկական հուշարձանների թիվը գերազանցում է 3.000-ը, Հյուսիսային Արցախում՝ 5.000-ը: «Կարծում եմ, ողջ տարածքում հայկական հուշարձանների թիվը կգերազանցի մի քանի տասնյակ հազարը», «Հենարան»-ում ասաց նա:

Հիմնական թիրախը քրիստոնեական տարր պարունակող կառույցներն էին՝ եկեղեցիներ, մատուռներ, խաչքարերով գերեզմանոցներ:

«Եզակի դեպքեր կան, որ Ադրբեջանում քանդեն հայկական միջնադարյան բերդերը կամ կամուրջները: Հիմնականում դրանց վրայից ջնջում են հայերեն արձանագրությունները: Գանձակ քաղաքի Սուրբ Հովհաննես եկեղեցին այսօր ծառայում է որպես Կամերային երաժշտության տուն», ասում է Սամվել Կարապետյանը: Հուշարձանագետը փաստում է, որ Ադրբեջանը ռազմական գործողություններից հեռու վայրում է ոչնչացնում հայկական հուշարձանները ու հայտարարում, որ դրանք պատերազմի հետեւանք են: «Բաքվի գերեզմանոցը, Սուրբ Աստվածածին եկեղեցին պատերազմին որեւէ առնչություն չունեն: Բաքվում պատերազմ չի եղել: Սա բացահայտ թշնամական քայլ է»:

Ջուղայի գերեզմանոցի հիմնահատակ ոչնչացմանը ադրբեջանցիները հասան փուլ առ փուլ: 1990-ականներին Ջուղայի միջնադարյան գերեզմանոցում կար շուրջ 10.000 խաչքար: 1998-ին՝ առաջին ավերածություններից հետո, խաչքարերի թիվը հասավ 2700-ի:

Ջուղայի գերեզմանոցի խաչքարերի ոչնչացման վերջին դեպքն արձանագրվել է 2005-2006 թթ: 5 օր շարունակ ադրբեջանցիները խաչքարերը ջարդում էին ծանր շինարարական տեխնիկայով. գերեզմանոցի ազատված տարածքը վերածվել էր հրաձգարանի: Այս ամենը՝ Հայաստանի իշխանությունների եւ միջազգային հանրության լուռ հայացքի ներքո: Միայն վերջնական ավերումից հետո Եվրոխորհրդարանը ցանկացավ ներկայացուցչություն ուղարկել՝ ուսումնասիրելու Ջուղայի գերեզմանոցում կատարված բարբարոսությունները, սակայն Ադրբեջանի իշխանությունները մերժեցին նախաձեռնությունն, ու անկողմնակալ Եվրոպան լռեց: Եվրոպան լռեց, որովհետեւ լուռ էր Հայաստանը: 2003-2006 թթ հրապարակված զեկույցներում Հուշարձանների ու տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհուրդը (ICOMOS) նույնպես անդրադարձավ Ջուղայի գերեզմանոցի խաչքարերի ոչնչացման հիմնախնդրին, սակայն դա էլ իրավիճակը չփոխեց:

2010-ին Գիտության զարգացման ամերիկյան ասոցիացիան (AAAS), կիրառելով աշխարհատարածքային տեխնոլոգիաները, ուսումնասիրել էր Նախիջեւանում գտնվող Ջուղայի հայկական միջնադարյան գերեզմանոցի՝ արբանյակից արված լուսանկարները: Ասոցիացիայի աշխատակից **Սյուզան Վոլֆիբերգը** բացահայտել էր, որ արբանյակի միջոցով 2003 թ. Ջուղայի գերեզմանոցում արված լուսանկարների եւ 2009-ի մայիսին արված լուսանկարների հետազոտությունը ցույց է տալիս, որ 2003թ. Ջուղայի գերեզմանոցում 15-16-րդ դարերի հնության հարյուրավոր խաչքարեր կային, որոնց մի մասը 2009 թ. լուսանկարներում անհետացել է: «Աշխարհատարածքային տեխնոլոգիաների կիրառման միջոցով արված ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրել, որ խաչքարերը տեղափոխվել են հողը փորող հատուկ սարքերի միջոցով, իսկ հետո հողի այդ հատվածները հավասարեցվել են»: Սակայն այս անգամ էլ հայկական եւ եվրոպական հանրությունը լռեց՝ թույլ տալով Ադրբեջանին շարունակել իր բարբարոսությունները:

Ադրբեջանական կողմը քանդում է հայկական հուշարձաններն ու միաժամանակ նախահարձակ լինում, թե Արցախում ոչնչանում են ադրբեջանական գերեզմանները:

Հուշարձանագետ Սամվել Կարապետյանը փաստում է, որ ադրբեջանցիները՝ չունենալով ոչ մի փաստ եւ հիմնավորում, անընդհատ բարձրաձայնում են, թե հայերը ոչնչացնում են իրենց մշակութային արժեքները, մինչդեռ հայկական կողմը՝ ունենալով հազարավոր փաստեր, լուսանկարներ ու տեսագրություններ, ոչինչ չի ձեռնարկում մեղավորին պատժելու համար:

«Անհրաժեշտ է աշխարհի ականջին հասցնել, որ ոչնչացվում են համաշխարհային մշակույթի տարրեր, հետեւաբար միջազգային հանրությունը չպետք է ձեռնպահ մնա», ասում է հուշարձանագետը՝ հավելելով, որ Ադրբեջանը նվաճած հայոց հողն ամրագրելու խնդիր ունի:

Արեւմտյան Հայաստանի ազգային խորհուրդը 3 տարի առաջ դատական հայց է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ պահանջելով Ադրբեջանին պատասխանատվության ենթարկել Հին Ջուղայի գերեզմանատան ոչնչացման համար: Դատարանի որոշումն ամենայն հավանականությամբ կիրառարակվի օգոստոսին: Սակայն սա բավարար չէ: Հայաստանը որպես պետություն պետք է դիմի Մարդու իրավունքների եվրոպական դատարան եւ պահանջի պատժել Ադրբեջանին՝ մշակութային հսկայական ժառանգությունը ոչնչացնելու համար: «Սա միայն մեկ նախարարության աշխատանքը չէ: Սա արտաքին գործերի, մշակույթի, սփյուռքի, պաշտպանության նախարարությունների ու Ազգային անվտանգության խորհրդի հարցն է, նրանք պետք է այս հարցով մտահոգված լինեն»: Կարապետյանը հավելում է, որ նման նախադեպերը բազմաթիվ են, երբ միջազգային իրավական ատյաններում դատի են տալիս եւ հաղթում:



*Հադրութի շրջան, Առաքել գյուղ. Սբ.Աստվածածին եկեղեցու տեսքը մինչեւ գյուղի գրավումն ադրբեջանական ելուզակների կողմից եւ ազատագրումից հետո:*



Վերջերս հրատարակված «Վարձք» հանդեսի երրորդ համարը նվիրված է Ադրբեջանում հայկական հուշարձաններին, որոնք այսօր չկան կամ ավերված վիճակում են: Կարապետյանի գնահատմամբ՝ հանդեսում ներկայացված մի քանի տասնյակ եկեղեցիներն ու մատուռներն ընդամենը փշրանքներ են այն հսկայական ժառանգության համեմատությամբ, որ եղել է Ադրբեջանում:

Ադրբեջանում հայկական հուշարձանների խնդիրը միջազգային հանրությանը ներկայացնելու նպատակով շուտով կկազմակերպվի «Ադրբեջանը՝ քաղաքակրթության թշնամի» խորագրով ցուցահանդես, որտեղ կներկայացվեն Ադրբեջանում հայկական հուշարձանների վիճակը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Դոկտ. Ռիտա Գույումճյանը ներկայացնում է իր եռահատորը



Մոնրեալի (Կանադա) Մկգիլ համալսարանի հոգեբուժության ամբիոնի պրոֆեսորի օգնական, Կոմիտաս վարդապետի կյանքի վերջին շրջանի հոգեբանական վերլուծությանը նվիրված «Archeology of Madness» գրքի հեղինակ դոկտ. Ռիտա Գույումճյանը Տորոնտոյի Թեքեյան մշակութային միության կազմակերպությամբ ապրիլի 8-ից շրջագայում է Կանադայի եւ Մ. Նահանգների 6 քաղաքներում՝ ներկայացնելով իր եռահատոր նոր ստեղծագործությունը՝ «Ապրիլ 24, 1915-ից առաջ եւ հետո: Վերապրողների կյանքը» ընդհանուր խորագրով:

Ըստ «Արմինըն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հաղորդագրության եռահատորը, որը ներառում է «Տարագրություն, խեղվածություն եւ մահ», Կոմիտաս վարդապետի հետ Չանկիրիի ճանապարհին», «Թեոդիկի կենսագրությունը եւ նրա հուշարձանը (նվիրված ապրիլի 11-ին (24-ին) աշխատությունը» եւ Թեքեյան մշակութային միության եւ Լոնդոնի Կոմիտաս ինստիտուտի համատեղ հրատարակության արդյունք է:

Առաջին գիրքը պարունակում է Արամ Անտոնյանի 1946-47 թթ. Կոմիտաս վարդապետի հիշատակին գրած 25 հոդվածները դոկտ. Ռիտա Գույումճյանի թարգմանությամբ: Հոդվածները, որոնք առնչվում են հատկապես ցեղասպանության առաջին երեք օրերին եւ Կոմիտասին մտահոգության մղած հանգամանքներին, հրատարակված են եղել Փարիզում լույս տեսնող մի պարբերականում, որի փակումից հետո, սակայն, մատնվել են մոռացության:

Գույումճյանի թարգմանություններով համեմատաբար ավելի քիչ ճանաչված մտավորականների կյանքի եւ ստեղծագործության մանրամասներ դարձյալ երեւան են հանվել՝ առավել ամբողջական դարձնելով ցեղասպանության երեւույթը:

Երկրորդ գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջինում Թեոդիկի (Լաբճինճյան Թեոդոս Գրիգորի, 1973-1928 թթ.) կենսագրությունն է, նրա ամենամեծ եւ ամենակարեւոր ներդրումը, գուցե, «Ամենուն տարեցույցը», տարեգրքի հիմնադրումն է 1907-ին, որի 19 հատորները փոքրիկ հանրագիտարաններ են Կոստանդնուպոլսի հայկական համայնքի առօրյա կյանքի հետաքրքրական դրվագներով: Երկրորդում Թեոդիկի «Յուշարձան ապրիլ տասնմեկին (24-ին)» աշխատության թարգմանությունն է: Այդտեղ նշված են 763 մտավորականների, կրոնավորների եւ հասարակական գործիչների անունները, կենսագրական տվյալները, ինչպես նաեւ նրանց մահվան հանգամանքները 1915-ին:

Երրորդ գիրքը հայ գրող, պատմաբան, հրապարակախոս եւ երգիծաբան Արամ Անտոնյանի (1875-1952) կենսագրությունն է: Նրան իրավամբ անվանել են «ցեղասպանության ուսումնասիրությունների հայրը», քանի որ նկատելու եւ գրի առնելու նրա յուրատեսակ կարողությունն ու ոճը վավերագրական բնույթ էին տալիս իր գրություններին:

Դոկտ. Գույումճյանի շրջագայությունը սկսվել է Տորոնտոյից ապրիլի 8-ին ԹՄՄ-ի կենտրոնում, ապա շարունակվել է հաջորդ օրը՝ ապրիլի 9-ին Դետրոյթում՝ «Հակոբյան» գորգերի պատկերասրահում, այնուհետեւ Չիկագոյում՝ ապրիլի 10-ին Սբ Հակոբ հայկական եկեղեցու դահլիճում, Նյու Ջերսիում՝ ապրիլի 13-ին Սբ Լեւոն հայկական եկեղեցու դահլիճում, Ֆիլադելֆիայում՝ ապրիլի 14-ին Մկրյան հաստատությունում եւ ավարտվում Մոնրեալում՝ ապրիլի 17-ին Թեքեյան միության կենտրոնում:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Վ. Թեքեյանի անվան 4 դպրոցների աշակերտները՝ մեկ օլիմպիադայում

Երեկ Թեքեյան կենտրոնում մեկնարկել է մաթեմատիկայի եւ հայոց լեզվի դպրոցական օլիմպիադան, որին մասնակցել են հանրապետության տարբեր մարզերից (Կապան, Գյումրի, Ստեփանավան, Երեւան)՝ Վահան Թեքեյանի անվան դպրոցների ութերորդ դասարանի շուրջ 60 աշակերտներ: Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես» լրատվական գործակալությունը, «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի եւ վերը նշված չորս դպրոցների միջեւ համագործակցությունը դարձել է ավանդական: Մեկ տարի առաջ մեկնարկած ծրագիրը չի սահմանափակվում օլիմպիադայով: Այս դպրոցների աշակերտները այցելելու են պատմամշակութային վայրեր, թանգարաններ, ամռանը հանգիստը կանցկացնեն հանրապետության դպրոցական ճամբարներում, իսկ աշնանը կմասնակցեն մարզական խաղերի:

Ինչպես տեղեկացրել է «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի տնօրեն **Արմեն Ծուլիկյանը**, օլիմպիադայում ամեն առարկայի համար սահմանվել է երեք մրցանակային տեղ եւ մեկ խրախուսական մրցանակ: «Անցած տարի, օրինակ, աշակերտներն իրենց մրցանակներով օգնեցին իրենց դպրոցներին, մասնավորապես ստացան մարզական գույք, համակարգիչներ», նշել է Արմեն Ծուլիկյանը:

Օլիմպիադայից հետո դպրոցականները կայցելեն Դելֆինարիում՝ դիտելու ծովային կենդանիների գեղեցիկ շոուն:

Ս. Ս.

# Ֆրանսիական պարգեւատրում

Ապրիլի 11-ին Հայաստանում Ֆրանսիայի Դեսպան պարոն Անրի Ռենոն «Ակադեմիական արմավենի» շքանշանով պարգեւատրեց երեք հայ դասախոսների՝ տիկին Անահիտ Գասպարյանին՝ Հայաստանի ֆրանսիական համալսարանից, պարոն Զավեն Հարությունյանին՝ Երևանի Պետական համալսարանից և տիկին Նաիրա Մանուկյանին՝ Երևանի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանից:

Երեք շքանշանակիրներն էլ աշխատել կամ շարունակում են աշխատել նշված համալսարաններում որպես ֆրանսերենի ամբիոնի վարիչներ Ֆրանսերեն լեզվի և ֆրանկոֆոնիայի տարածմանը մասուցած իրենց նշանակալի ծառայության համար Ֆրանսիայի կրթության նախարարը նրանց արժանացրեց այս պարգևին:

«Ակադեմիական արմավենի» շքանշանը հիմադրվել է Նապոլեոն Առաջինի կողմից, 1808 թվականին, նպատակ ունենալով երախտիքի տուրք մատուցել համալսարանի անդամներին «Ակադեմիական արմավենի» շքանշանով պարգևատրվում են նաև այն օտարերկրացիները կամ արտերկրում բնակվող այն ֆրանսիացիները, ովքեր ակտիվորեն մասնակցում են ֆրանսիական մշակույթի տարածմանը ողջ աշխարհում

# Հայ ծանրորդներն անմասն մնացին պարգեւներից

Երեկ Կազանում Եվրոպայի առաջնության պարգեւները վիճարկեցին մինչեւ 58 կգ քաշային կանայք ու մինչեւ 69 կգ քաշային ծանրորդները: Հայաստանի պատվիրակներից մրցահարթակ դուրս եկան Վանիկ Ավետիսյանն ու Սամվել Գրիգորյանը: Ուժեղագույնների մրցաշարում հայտավորվել էին 9 ծանրորդներ, սակայն վնասվածքի պատճառով արդեն մեկնարկում ֆրանսիացի փորձառու ծանրորդ Վենսելաս Դաբայան հրաժարվեց մրցումներից:



Հայ ծանրորդներն ի վիճակի չեղան խառնվելու մեդալների համար մղվող մրցապայքարին: Պոկում վարժությունը մեր ծանրորդները սկսեցին ցածր քաշերից: Վանիկը բարձրացրեց 133 կգ, Սամվելը՝ 135: Ձախողելով 2-րդ մոտեցումները, երրորդ փորձից Վանիկը գլխավերեւում պահեց 138 կգ-անոց ծանրաձողը, իսկ Սամվելը պոկում վարժությունն ավարտեց 140 կգ-ով: Հայ ծանրորդները պոկում վարժությունում զբաղեցրին 7-րդ եւ 8-րդ տեղերը: Փոքր ոսկե մեդալը 154 կգ արդյունքով նվաճեց թուրք Մեթե Բինայը: Արծաթե մեդալակիր դարձավ ռուսաստանցի Վլադիսլավ Լուկանինը՝ 146 կգ: Նրանից 1 կգ պակաս բարձրացրեց բրոնզե մեդալի արժանացած մոլդովացի Ալեքսանդր Սպաչը, որը հանդես էր եկել B խմբի մրցաշարում: Նա անձնական քաշով ընդամենը 10 գրամով թեթեւ էր 145 կգ բարձրացրած ալբանացի Դանիել Գոդելիից, ուստի բրոնզե մեդալը բաժին հասավ նրան:

Հրում վարժությունում առաջինը մրցահարթակ դուրս եկավ Սամվել Գրիգորյանը, որը միայն 3-րդ մոտեցմամբ հաղթահարեց նախնական 173 կգ քաշը ու երկամարտի 313 կգ արդյունքով զբաղեցրեց 5-րդ տեղը: Վանիկ Ավետիսյանն էլ անհաջող հանդես եկավ: Առաջին մոտեցմամբ հաղթահարելով 174 կգ-ը, Վանիկը ձախողվեց 177 կգ-ը բարձրացնելիս ու երկամարտի 312 կգ արդյունքով գրավեց 6-րդ տեղը:

Հրում վարժությունում 0 ստացան ու մեդալների համար պայքարից դուրս մնացին թուրք ծանրորդներ Մեթե Բինայն ու Էրոլ Բիլգինը: Եվրոպայի չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Վլադիսլավ Լուկանինը՝ 332 կգ (146+186): Արծաթե մեդալակիր դարձավ ռումինացի Ռազվան Մարտինը՝ 331 կգ (150+181): 3-րդ տեղը գրավեց ալբանացի Դանիել Գոդելին՝ 321 կգ (145+176):

Մինչեւ 58 կգ քաշային ծանրորդուհիների մրցավեճում Եվրոպայի չեմպիոնուհու տիտղոսին արժանացավ բելառուս մարզուհի Նաստասիա Նովիկովան, որը երկամարտում ցույց տվեց 225 կգ (100+125) արդյունք: Արծաթե մրցանակակիր դարձավ ուկրաինուհի Յուլիա Պարատովան՝ 200 կգ (92+108): Բրոնզե մեդալը բաժին հասավ լեհ Ալեքսանդրա Կլեյնովա-Կրժիվանսկային, որը երկամարտում ցույց տվեց 196 կգ (86+110) արդյունք:

Այսօր հայ ծանրորդներից մրցահարթակ դուրս կգան Աղասի Աղասյանն ու Արայիկ Միրզոյանը, որոնք կմասնակցեն մինչեւ 77 կգ քաշայինների մրցապայքարին:

# «Շախտյորը» կրկին անզոր էր «Բարսելոնի» դեմ



**Հայտնի դարձան ֆուտբոլի չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչի երկու մասնակիցները: Պատվավոր մրցանակի համար պայքարը կշարունակեն իսպանական «Բարսելոնն» ու անգլիական «Մանչեսթր Յունայթեդը»: Կիսաեզրափակիչ ուղեգրերի համար պայքարող չորս զույգերից միակ ինտրիգը պատասխան խաղում պահպանվում էր անգլիական երկու թիմերի մրցավեճում: Առաջին խաղում Լոնդոնում «Չելսիին» հաղթելով 1-0 հաշվով, «Մանչեսթր Յունայթեդը» հաջորդ փուլ դուրս գալու հիանալի հնարավորություն էր ստացել: Եվ Ալեքս Ֆերգյուսոնի սաները ձեռքից բաց չթողեցին այդ հնարավորությունը: Սեփական հարկի տակ էլ «Մանչեսթր Յունայթեդը» հաղթեց 2-1 հաշվով:**

**Խաղից հետո թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին էր.**

**Կառլո Անչելոտի** («Չելսի»)- Մենք լավ սկսեցինք խաղը, վերահսկում էինք գնդակը, գրոհում էինք: Առաջին խաղակեսի վերջին 10 րոպեներին ծանր կացության մեջ էինք հայտնվել, քանի որ դաշտի տերերը անընդհատ գրոհում էին եւ բացեցին հաշիվը: Ընդմիջումից հետո փորձեցինք հետ բերել կորցրածը, սակայն դա շատ դժվար էր: Մենք դուրս մնացինք չեմպիոնների լիգայից: Սակայն հարկավոր է առաջ նայել: Առջեւում այլ խաղեր են, որոնցում հարկավոր է հաղթել, քանի որ ցանկություն կա հաջորդ տարի եւս խաղալ չեմպիոնների լիգայում:

**Ալեքս Ֆերգյուսոն** («Մանչեսթր Յունայթեդ»)- Թիմը շատ լավ խաղաց: Ծանր խաղ էր: «Չելսին», ինչպես եւ մենք, խաղի գերակշիռ մասում լավ էր գործում: Իրենց լավ դրսեւորեցին Ուեյն Ռունին եւ Ռայան Գիգզը: Վերջինս յուրօրինակ ֆուտբոլիստ է: Նա գոլի համահեղինակ դարձավ երկու խաղերում էլ: Նրա մասնակցությունը կար նաեւ խփված 2-րդ գոլում: Նրա ներդրումն այսօրվա հաղթանակում մեծ է:

Թեեւ «Բարսելոնը» դեռեւս առաջին խաղում էր լուծել կիսաեզրափակիչի ուղեգրի հարցը, սակայն մարտական կազմով էր ներկայացել «Շախտյորի» հետ հանդիպմանը: Վերջինս սեփական մարզադաշտում փորձեց գոնե դրական արդյունքի հասնել ահեղ մրցակցի հետ մրցավեճում: Այդ խաղում բավական ակտիվ էր Հենրիխ Մխիթարյանը, որը մի քանի անգամ ճշգրիտ փոխանցումներով հարվածային դիրք դուրս բերեց իր խաղընկերներին: Մեկ անգամ էլ Հենրիխն ինքը փորձեց գրավել Վալդեսի դարպասը, սակայն վերջինս փրկեց դրությունը: Ի վերջո մրցակցության ելքը վճռեց «Բարսելոնի» ֆուտբոլիստների կատարողական բարձր վարպետությունը: Իսկ միակ գոլն էլ իր օգտին գրանցեց Լիոնել Մեսին՝ 9 գնդակով գլխավորելով չեմպիոնների լիգայի լավագույն ռմբարկուների ցուցակը:

Խաղից հետո թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին էր.

**Միրչա Լուչեսկու** («Շախտյոր»)- Շնորհավորում եմ «Բարսելոնին» եւ հաջողություն մաղթում հետագա հանդիպումներում: Շատ ուրախ կլինեմ, եթե «Բարսելոնը» նվաճի չեմպիոնների գավաթը: Մենք դեռեւս առաջին խաղում էինք զրկվել հաջորդ փուլ դուրս գալու հնարավորությունից: Այսօր հարկավոր էր այնպես խաղալ, որպեսզի գլուխներս բարձր հեռանայինք խաղադաշտից: Ամեն դեպքում դա մեզ հաջողվեց: Մենք ստիպեցինք «Բարսելոնին» պաշտպանվել, ավելի շատ գոլային պահեր ստեղծեցինք, ինչը չէր հաջողվել ոչ մի թիմի: Մենք լավ ճանապարհ անցանք չեմպիոնների լիգայում, որի համար շնորհակալ եմ թիմի ֆուտբոլիստներին ու ֆուտբոլասերներին:

**Խոսեպ Գվարդիոլա** («Բարսելոն»)- Արդեն 3 տարի «Շախտյորի» երկրպագուն եմ: Տարեցտարի այս թիմն ավելի ուժեղ է դառնում: Ուստի հուսամ, որ հաջորդ տարի «Շախտյորի» հետ չենք հանդիպի: Ինձ դուր եկավ թիմի խաղը նաեւ Բարսելոնում: Միանգամից չհաջողվեց տիրել նախաձեռնությանը, թեեւ շատ էինք դա ցանկանում:

**Հենրիխ Մխիթարյան**- 1-5 հաշվով կրած պարտությունից հետո ցանկանում էինք հաղթել եւ ուրախացնել մեր երկրպագուներին: Նման խաղերը շատ չեն, ուստի ձգտում ենք ուրախություն պատճառել ֆուտբոլասերներին: Ցավոք, այս անգամ դա մեզ չհաջողվեց, թեեւ բոլորս էլ ձգտում էինք դրան: Հաջորդ անգամ հարկավոր է ավելի սառնասիրտ գործել եւ եզրահանգումներ կատարել: Մեր թիմը երիտասարդ է եւ կարող է շտկվել, քանի որ բոլորն էլ ցանկանում են սովորել եւ ավելիին հասնել, քան այս տարում էր: Զգացի, որ չեմպիոնների լիգան այլ մակարդակ է, որը չի կարելի համեմատել Ուկրաինայի առաջնության հետ: Այստեղ խաղում են ամենաուժեղ թիմերը, իսկ պայքարը շարունակում են նրանք, ում նյարդերը կարգին են եւ ով ավելի ուժեղ է:

## ՃԱԽՄԱՏ

# Դավիթ Պետրոսյանը շարունակեց հաղթարշավը

**Դուբայի շախմատի մրցաշարի 2-րդ տուրից հետո առաջատարների խմբում գտնվող 5 հայ շախմատիստներից միայն Դավիթ Պետրոսյանին հաջողվեց շարունակել հաղթարշավը: Դավիթը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Մուրթազ Կազգալեեւին: Կարեն Գրիգորյանը հաշտություն կնքեց Լեւան Պանցուլայայի հետ, Սամվել Տեր-Սահակյանը միավորը կիսեց Յուսուպ Աթաբաեւի հետ մրցավեճում, Արտաշես Մինասյանն էլ ոչ-ոքի խաղաց Շրինաթ Նարայանանի հետ:**

**Իսկ ահա Զավեն Անդրեասյանն անդրանիկ պարտությունը կրեց ադրբեջանցի Սարհան Գուլիեւի հետ պարտիայում: 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Աշոտ Անաստասյանը՝ պարտության մատնելով Մակսաթ Աթաբաեւին: Տիգրան Քոթանջյանն էլ հաղթեց Էլմիրա Միրզոեւային: Պարտություններ կրեցին Հովիկ Հայրապետյանն ու Գեւորգ Հարությունյանը՝ զիջելով համապատասխանաբար Գադիր Հուսեյնովին ու Դինարա Սադվակասովային: Վրացահայ Դավիթ Հարությունյանը ոչ-ոքի խաղաց Օրխան Աբդուլովի հետ:**

**3 տուրից հետո Դավիթ Պետրոսյանը նույնքան միավորով Սարհան Գուլիեւի, Բաբու Լալիթի, Սերգեյ Վոլկովի եւ Նեգի Պարիմարջանի հետ գլխավորում է աղյուսակը: Նրանց 2,5-ական միավորով հետապնդողների թվում են Տիգրան Քոթանջյանը, Աշոտ Անաստասյանը, Կարեն Գրիգորյանը, Արտաշես Մինասյանն ու Սամվել Տեր-Սահակյանը: 4-րդ տուրում Դավիթ Պետրոսյանը սեւերով կխաղա մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշ ունեցող հնդիկ գրոսմայստեր Կրիշնան Սասիկիրանի հետ:**

# Երկրորդ խմբից առաջադիմել է միայն ՀՀ հավաքականը

**ՖԻՖԱ-ի դասակարգման նոր ցուցակում ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը զբաղեցնում է 62-րդ տեղը: Նախորդ ամսվա համեմատ մեր ընտրանին առաջադիմել է 3 հորիզոնականով:**

**Եվրո-2012-ի ընտրական մրցաշարի մեր մրցակիցներից Ռուսաստանի հավաքականը 5 հորիզոնականով նահանջել եւ զբաղեցնում է 18-րդ տեղը: Նույնքան նահանջ են ունեցել սլովակները, որոնք ներկայումս 27-րդ տեղում են: Իսկ ահա իռլանդացիները պահպանել են իրենց տեղը 34-րդ հորիզոնականում: 2 տեղով նահանջել են մակեդոնացիները, որոնք այժմ հանգրվանել են 85-րդ հորիզոնականում: Իսկ Անդորրայի հավաքականը մնացել է 202-րդ տեղում: Այսպիսով ստացվում է, որ միայն Հայաստանի հավաքականն է առաջադիմել ընտրական 2-րդ խմբի թիմերից:**

**Դասակարգման ցուցակը շարունակում է գլխավորել Իսպանիայի հավաքականը, որին հաջորդում են հոլանդացիները: Բրազիլիայի հավաքականը 5-րդ տեղից բարձրացել է 3-րդ հորիզոնական՝ շրջանցելով Գերմանիայի եւ Արգենտինայի հավաքականներին: 6-րդ եւ 7-րդ տեղերում են մնացել Անգլիայի եւ Ուրուգվայի հավաքականները: Լավագույն տասնյակում են նաեւ Պորտուգալիայի, Իտալիայի եւ Խորվաթիայի ընտրանիները:**

**Ամենամեծ առաջընթացն ունեցել են Իսրայելի եւ Բելգիայի հավաքականները, որոնք 25 տեղով բարձրացել են: Իսրայելի հավաքականը ներկայումս զբաղեցնում է 33-րդ տեղը, բելգիացիները 37-րդ հորիզոնականում են: Իսկ ահա Հյուսիսային Իռլանդիայի ընտրանին 25 հորիզոնականով նահանջել է:**

# Խորեն Գեւորը ներողություն է խնդրել մրցավարից

Ինչպես տեղեկացրել էինք, Խորեն Գեւորը Ռոբերտ Շտիգլիցի հետ մենամարտում որակազրկվելուց հետո հարձակվել էր ռինգի մրցավար Մանֆրեդ Կյուխլերի վրա ու հարվածել նրան: Եվ ահա հայ բռնցքամարտիկը պաշտոնապես ներողություն է խնդրել մրցավարից իր արարքի համար, նշելով, որ չի տիրապետել իրեն ու պահի ազդեցության տակ է հարձակվել Կյուխլերի վրա: Միաժամանակ Գեւորը նշել է, որ ինքը մեղավոր չէ Շտիգլիցի ստացած վնասվածքում: Ըստ նրա, պատահաբար են գլխով բախվել միմյանց:

Խորեն Գեւորի մենեջեր Պետեր Շուլցը տեղեկացրել է, որ Կյուխլերն ընդունել է բռնցքամարտիկի ներողությունը: Կյուխլերը գտնում է, որ Գեւորն արժանի չէ երկարատեւ որակազրկման:

# Քերիմովը Կառլոսին շքեղ մեքենա է նվիրել



«Անժիի» սեփականատեր Սուլեյման Քերիմովը Ռոբերտո Կառլոսին ծննդյան 38-ամյակի առիթով ֆրանսիական մակնիշի Bugatti Veyron մեքենա է նվիրել, որի արժեքը 2 մլն դոլարից ավելի է: Մեքենան հոբելյարին սպասում էր «Մետրոպոլ» հյուրանոցի ավտոկանգառում:

Ծննդյան օրվա առիթով շնորհավորելով Ռոբերտո Կառլոսին, Քերիմովը նրան այդ մակնիշի խաղալիք ավտոմեքենա է հանձնել, որից հետո հայտնել է, որ իսկական մեքենան տիրոջը սպասում է հյուրանոցի ավտոկանգառում: Նման նվերից անակնկալի եկած բրազիլացի ֆուտբոլիստն անմիջապես ցանկացավ համոզվել դրանում: Հյուրանոցից դուրս գալով, Կառլոսը գտավ իր թանկարժեք նվերը:

«Անժիի» սեփականատերը չի մոռացել նաեւ թիմի մյուս ֆուտբոլիստներին: Նա հայտարարել է, որ եթե առաջիկա 4 տարում թիմը նվաճի ՌԴ չեմպիոնի տիտղոսը, նմանատիպ մեքենաներ կստանան նաեւ մյուս ֆուտբոլիստները: Ռոբերտո Կառլոսի ծննդյան արարողությանը ներկա են գտնվել նաեւ «Լոկոմոտիվի» դարպասապահ Գիլերմեն, «Դինամոյի» հարձակվող Քեւին Կուրանին եւ «Սպարտակի» հարձակվող Վելիտոնը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

## Հայաստան համահայկական հիմնադրամի ընթացիկ ծրագրերի ցանկը

| ՀՀ/ԼՂՀ | Վայր | Անվանում | Արժեք/ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| | | **Առողջապահություն** | |
| ՀՀ | Սյունիք | Կապան քաղաքի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքի մասնաշենքի հիմնանորոգում | 241,548,340 |
| ՀՀ | Կոտայք | Չարենցավան քաղաքի բժշկական կենտրոնի մանկաբարձական բաժանմունքի վերանորոգում | 73,418,120 |
| ԼՂՀ | Մարտունի | Նոր հիվանդանոցի կառույցում Մարտունի քաղաքում | 662,021,090 |
| | | **Կրթություն** | |
| ՀՀ | Երեւան | Շենգավիթի գիշերօթիկ մանկապարտեզի հիմնանորոգում | 224,647,730 |
| ՀՀ | Լոռի | Վանաձորի թիվ 30 մանկապարտեզի կահավորում և խաղահրապարակի բարեկարգում | 9,009,900 |
| ՀՀ | Լոռի | Համակարգչային դասասենյակի հիմնում Վանաձոր քաղաքի մանկատանը | 5,750,000 |
| ԼՂՀ | Շուշի | Խաչատուր Աբովյանի անվան դպրոցի վերակառուցում | 552,787,480 |
| ԼՂՀ | Հադրութ | Տող գյուղի դպրոցի 2-րդ մասնաշենքի վերակառուցում | 326,358,510 |
| ԼՂՀ | Մարտունի | Գիշի համայնքում նոր դպրոցի կառուցում | 513,281,620 |
| ԼՂՀ | Մարտունի | Ճարտար համայնքում նոր մանկապարտեզի կառուցում | 172,965,270 |
| ԼՂՀ | Մարտակերտ | Վաղուհաս համայնքում նոր դպրոցի կառուցում | 482,027,000 |
| ԼՂՀ | Հադրութ | Դրախտիկ համայնքում նոր մանկապարտեզի կառուցում | 187,797,520 |
| | | **Ենթակառուցվածքներ** | |
| ՀՀ | Լոռի | Արծնի համայնքի գազամատակարարման համակարգի կառուցում | 41,600,000 |
| ԼՂՀ | Շուշի | Շուշի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում | 361,394,000 |
| ԼՂՀ | Ստեփանակերտ | Ստեփանակերտ քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի 10-րդ և 11-րդ գոտիների վերանորոգում | 850,106,300 |
| ԼՂՀ | Շուշի | Շուշի քաղաքի Հախումյան փողոցի բարեկարգում | 79,009,985 |
| ԼՂՀ | Շուշի | Շուշի քաղաքի Պռոշյան փողոցի բարեկարգում | 113,199,340 |
| ԼՂՀ | Մարտունի | Մարտունի քաղաքի ջրամատակարարման ցանցի վերակառուցում | 544,998,560 |
| ԼՂՀ | Ասկերան | Նորագյուղ համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում | 236,992,600 |
| ԼՂՀ | Ասկերան | Ավետարանոց գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցում | 153,678,450 |
| ԼՂՀ | Քաշաթաղ | Բերձոր քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում | 171,823,300 |
| ԼՂՀ | Մարտունի | Հաղորտի գյուղի ճանապարհի կառուցում | 29,516,500 |
| | | **Մշակույթ** | |
| ԼՂՀ | Շուշի | Շուշիի կրթամշակութային կենտրոնի վերակառուցում | 359,748,000 |
| ԼՂՀ | Շուշի | Մեծ Շեն գյուղի համայնքային կենտրոնի կառուցում | 69,342,640 |
| | | **Գյուղատնտեսություն** | |
| ՀՀ | Տավուշ | Գյուղատնտեսական զարգացման ծրագիր 14 գյուղերում | |
| ՀՀ | Տավուշ | Սարիգյուղ և Այգեհովիտ գյուղերում ագրոտեխնիկական կայանների կառուցում | 14,040,000 |
| | | **Մրցութային կամ նախագծային փուլում գտնվող ծրագրեր** | |
| ՀՀ | Տավուշ | Դիտավան համայնքի հիմնական դպրոցի տարրական դասարանների մասնաշենքի կառուցում | |
| ՀՀ | Շիրակ | Աշոցք համայնքում նոր դպրոցի կառուցում | |
| ԼՂՀ | Շուշի | Շուշի քաղաքում նոր արհեստագործական ուսումնարանի կառուցում | |
| ԼՂՀ | Մարտունի | Սարգսաշեն համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում | |
| ԼՂՀ | Մարտունի | Կարմիր Շուկա համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում | |
| ԼՂՀ | Շուշի | Քարին Տակ համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում | |
| ԼՂՀ | Հադրութ | Տող համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում | |
| ԼՂՀ | Հադրութ | Հադրութ քաղաքի ջրամատակարարման համակարգի կառուցում | |
| ԼՂՀ | Շուշի | Շուշի քաղաքում գիշերօթիկ մանկատան կառուցում | |
| ԼՂՀ | Ստեփանակերտ | Ստեփանակերտ քաղաքի միայնակ հաշմանդամ ծերերի տուն-ինտերնատի հիմնանորոգում | |
| ԼՂՀ | Մարտակերտ | Չափար համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում | |
| ԼՂՀ | Հադրութ | Հարթաշեն համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում | |
| ԼՂՀ | Հադրութ | Ուխտաձոր համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում | |
| ԼՂՀ | Ասկերան | Խնկապատ համայնքի միջնակարգ դպրոցի տանիքի վերակառուցում | |

**Ամենամյա ծրագրեր**

| |
|---|
| Հանրապետության Նախագահի մրցանակ |
| Ֆինանսական աջակցություն զոհված ազատամարտիկների և առաջին կարգի հաշմանդամների ընտանիքներին |
| Հանրապետության Նախագահի պարգև՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում |
| Օրորոց /սոցիալապես անապահով երիտասարդ ընտանիքների աջակցության ծրագիր/ |

## Թեքեյան մշակութային միության ամենամյա մրցանակաբաշխություն

«**Վահան Թեքեյան**» ամենամյա մրցանակաբաշխման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 18-ին, երկուշաբթի օրը, ժամը 15.00-ին, Թեքեյան կենտրոնի (Խանջյան 50) մեծ դահլիճում:

Գրականության, երաժշտության, նկարչության, թատրոնի, խաղաֆական երգիծանքի, հեռուստատեսության, մանկական ծրագրերի եւ «**Ազգ**» օրաթերթի հրապարակումների համար տրվող մրցանակների հանձնման արարողությանը կուղեկցի գեղարվեստական ծրագիր:

**ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է**

### ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը տեղեկացնում է, որ ապրիլի 16-ին ժամը 13-00-ին Թեքեյան Կենտրոնի ցուցասրահում տեղի կունենա «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխության ցուցահանդես մրցույթը (գեղանկար, fանդակ) անվանակարգերում:

## Մինսկի խմբի համանախագահ եռյակի ճանապարհը դեպի Բաքու

*1-ին էջից*

Ի դեպ, միգուցե պատահաբար, շփման գծի հենց Աղդամի հատված երեկ ժամանեց Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը: Արդեն Բաղալովների ընտանիքում համանախագահները հանդիպել են Ֆարիզի հարազատներին եւ հայտնել իրենց ցավակցությունը, ավելին՝ ֆրանսիացի համանախագահ Ֆասիեն նշել է. «Ինձ վրա բավական վատ ազդեցություն գործեց 9-ամյա Ֆարիզի սպանության լուրը»: Մինչ այդ, ինչպես տեղեկացնում են ադրբեջանական աղբյուրները, հարեւան երկրի գլխավոր դատախազության fննչական բաժնի պետ Նազիմ Աբբասովը Մինսկի խմբի համանախագահներին է ներկայացրել «փաստեր, որոնf ապացուցում են, որ ադրբեջանցի երեխան մահացել է հայկական կողմից արձակված դիպուկահար կրակից»: Աբբասովը նշել է, որ «իրենf անցկացրել են հետաfննություն, բացահայտվել է հայկական կողմի մեղfը»: Իհարկե, տարօրինակ կլիներ, որ ոչ թե միջազգային անկախ, այլ Ադրբեջանի դատախազության իրականացրած հետաfննությամբ հայկական կողմը մեղավոր չճանաչվեր: Բաղալովի «սպանության» վերաբերյալ «փաստեր» ստանալուց հետո՝ Մինսկի համանախագահ եռյակը շրջայց է կատարել նաեւ շփման գոտու՝ Թարթառի, Աղդամի եւ Բարդինի ուղղություններով: Հենց Թարթառի շրջանի Բեյմիսար գյուղում երեկ հրդեհի հետեւանfով ամբողջովին փլվել է երկհարկանի տուն, զոհվել է 4-ամյա Զաuուր Ռուստամ օղլու Սաֆարովը: Շրջանի դատախազությունն իրականացնում է հետաfննություն: Մնում է միայն հույս հայտնել, որ դատախազության հետաfննությամբ «չի բացահայտվի», որ ադրբեջանական գյուղում հրդեհի ու երեխայի մահվան պատճառը «ԼՂ անջատողական ռեժիմի» գործողություններն են:

Երեկվա մեկ այլ իրադարձություն նույնպես բավական ուշագրավ կարող է լինել Մինսկի խմբի համանախագահների համար: Ադրբեջանում «հայրենիfի դավաճանություն» հոդվածով fրեական գործ է հարուցվել ադրբեջանական բանակի սերժանտ Անար Հաջիեւի նկատմամբ: Հաջիեւն այն նույն սերժանտն է, որին մարտի 17-ին, համաձայն Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ նախագահների պայմանավորվածության, հայկական կողմը հանձնեց Ադրբեջանին, փոխարենը ստանալով Տավուշի մարզի խաղաղ բնակիչ Արթուր Բադալյանին: Փաստը հետաfրfրական է այնfանով, որ ավելի վաղ ադրբեջանական լրատվամիջոցները պնդում էին, թե Հաջիեւի գերեվարումը «հայկական կողմի դիվերսիոն գործողության արդյունf է», մինչդեռ, փաստորեն, ադրբեջանցի սերժանտը ինfնակամ է լfել մարտական հենակետը՝ հանձնվելով հակառակորդին. «Հայրենիfի դավաճան» հոդվածը այլ բանի մասին չի վկայում: Այս իրադարձությունները, ինչպես նաեւ նախագահ Ալիեւի՝ Ադրբեջանի կառավարության նիստում արած հայտարարությունները, պետf է, որ նույնպես «վատ անդրադառնան» ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վրա: Վերջիններս բարձրաձայնելու հնարավորություն ունեն. Բաfվում նրանց սպասում է հանդիպում Իլհամ Ալիեւի եւ արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ: Ադրբեջանական «ԱՊԱ» գործակալությունը նույնիսկ նշում է, որ «դիվանագիտական աղբյուրի տեղեկացմամբ»՝ համանախագահները շուտով Վաշինգտոնում հանդիպում կունենան պետfարտուղար Հիլարի Քլինթոնի հետ՝ «ներկայացնելու ԼՂ հիմնահարցի վերաբերյալ վերջին զարգացումներն ու բանակցությունների խաղաղ ընթացfը»:


**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

- **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**
- **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*



Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում եւ վերջինիս միջոցով իրականացնելու է «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ին օտարման իրավունfով պատկանող գույfի աճուրդային վաճառf հրապարակային սակարկություններով՝

-Բնակելի տուն, ընդ. մակերեսը՝ 278.68 fմ եւ 0.04 հա հողամաս: Հասցե՝ ՀՀ, f. Երեւան, Անտառային փող., 104/1: Մեկն. գինը՝ 390000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով f.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 16.05.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00-ից – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպfում պետf է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնման առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 13.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: